Նա հանդէս է զալիս կազմակերպութեան արշալոյնին, տանուհինդ տարի սրանից առաջ, մասնակցում է նրա հիմնադրութեանը և վարպետ ձեւքով կուռմ է նրա ձականագիրը : Եւ նա կուսակցութեան տառաջնորդն էր տանուհինդ տարուց ի վեր . . . նա կուսակցութեան ուղեկիցն էր, նրա զարգացման բոլոր շրջաններում, անընդհատ փորձութիւնների բոլում, աջողութիւնների ու տաղնապի օրերում . . .

Ամէն անդամ, երբ սղասառութեան գործը կաղում էր, երբ ուշակցիսն լաց ու վհասութիւն էր տարածում ամէն առել հայրենի երկրում, երիտասարդութիւնը նրան էր միշտ դարձնում իր վշտու հայեացքը, նրանից պատում

էր նոր խրախուսանք, նոր մարտահրաւէր: Եւ նա իր կարող ու ազգու խօսքով, տոկուն, յարտառե քարոզներով սեղմում էր ցրուող շարքերը, մղում էր ուժերը դէպի կոփու ու զոհողութիւն:

Ոչ մէկը հաց յեղափոխական դէմքերից չէ ունեցել այնպիսի ախրական ազդեցութիւն նրիտասալովթեան վրայ, ոչ մէկը չէ վաստակել այնքան ընդարձակ և այնքան խոր ժողովրդականութիւն Ռուսաստանում: Եւ ինտելիգենցիայի, և' ամբոխի մէջ, և' ուսանող երիտասարդութեան մէջ, և' նոյնիսկ բուրժուա հասարակութեան մէջ — բոլոր շրջաններում Քրիստոփորն ունէր պատկառու ունկնդիրներ, որնց առջև նա արծարծում էր իր նւիրական պաշտամոնքի նիւթը՝ թիւրքահայոց տղամառութեան դասը:

Նա մարմնացած զգայնութիւն էր այդ բոպէներին, և չէր կարելի լսել նրան առանց յափշտակութեան: Պարզ, անպահոց, էր նրա պերճախօսութիւնը, առանց կեզծ պաֆոսի⁽¹⁾ ու արհեստական շեշտերի. բայց նա միշտ եռում էր մի սուրբ կատաղութեամբ; Նրա ձայնը դողում, նրա տանջւած, առաքեալի դէմքը ցնցուում էր խօսելու միշոցին, նա ինքն ապրում էր հայկական ճգնաժամի:

Հրապուրիչ էր նա այդ վայրկեաններին... Հակոռակորդութիւնը, ցած կրքերը խսպառ լսում էին, դահնիքը ելեքարականուում: Էր և բոլորն էլ, համախոն ու հակառակորդ, պատկառամոքով խնարճուում էին հուեսուրի գերող անձնառորութեան առջև:

Լոնչ էր այդ թովիչ ազգեցութեան զաղանիքը:

— Հերոսի բարոյական բարձրութիւնը:

Նրա լայն վարզացումն ու գրութեան խորունկ ծառնօթութիւնը դարձնում էին նրա խօսքը հեղինակառու ու համոզիչ, բայց նրա բարոյական հմայքը էր, որ այնպէս շղթայում էր ունկնդիրներին, որ ախրանում էր

բազմամարդ լսորաններին, որ զինաթափ էր անում ամհնասանդուապ հակառակորդին անդամ...

Ահա թէ ի՞նչ էր Քրիստոափորը, ահա թէ ում կորցրեց Հ. Յ. Դաշնակցութիւնը: Ազնւութեան ու այլափրութեան մի տիպար, անխախտ, երկաթէ համոզմանք, անվախ, յանդուզն մաքառով, — ամէն տեղ, ուր նա երեւում էր, նոյնիսկ խոպան ու անապատացած միջավայրերում՝ նա ծաւաղում էր մի ճփս ու բեզմնաւոր գործունէութիւն:

Անզուգական իր կազմակերպչական տաղանդով՝ նա վարպետութեամբ կարողանում էր շահագործել իրեն հանդիպած բոլոր ուժերն ու գործոնները, կարողանում էր ուղղել նրանց դէպի իդէալը — հայկական աղատութեան գործը:

Ահնաշտ ու անողոք ներքին ու արտաքին թշնամիների գիմաց՝ նա մի հաշտարար ոգի էր իրայինների շրջանում: Քանի ընդհարումներ է նա խազաղացրել, քանի գժառութիւններ է հարթել ընկերների մէջ՝ իր բարոյական հեղինակութեամբ...

Ամբողջապէս գաղափար գարծած մի տառքեալ էր նա, մի «Գէրսիչ», ինչպէս ոմանք անուանում էին նրան. Դիւթեական կարօտութիւնն ու զրկանքները ոչնչ էին նրա համար, և այդ մէջտ երիտասարդ, մէջտ թարմ, կինապի քարոզիչը մէկ հոգս միայն ունէր՝ կազմակերպութեան բարգաւաճումը, որի համար կրեց երկարատե հալուծուք ուսու կառավարութեան կողմից, բայս ու աքսոր:

«Դաշնակցութիւնը» նպարա էր Քրիստոափորով: Զը կայ մի դրամագ կուսակցութեան պատմութեան մէջ, չկայ մի բանավէճ ծրագրավին կամ առաքափիկ⁽¹³⁾ ինդիբիների մասին, չկայ մի ձեռնարկ, գաղափարական մի կոփու, ուր մասնակցած չիմի մեր վեսերանը, ուր նա թողած չընի իր բնորոշ կոփքը, ուր նա հարթած չիմի ճանապարհները:

Սակայն նա միայն կուսակցութեան մարդ չէր։ Նա մարդ էր բառիս բովանդակ նշանակութեամբ։ Նա խոր յարգանք էր վայելու մ Կովկասի, և՝ ոռու և՝ վրացի յեղանգիտականների շրջաններում։ իսկ երեկ նրա դամբարանի մօտ ողբում էին նրան մոկեզոնական շարժման ամենահոչակառ պարագլուխները։ Ո՛չ, Քիվասափորը չէր պատկանում միմիւն հայութեան . . .

Նա ս օ ց ի ա լ ի ս տ էր իր աշխարհայեցութեան, իր զգացումներով ու տեսպերամնառով⁽¹⁾, իր ամբողջ կեանքով։ բայց նա և հայրենասոէր էր բառիս ամսնակեն նշանակութեամբ։ Նրա հեռաւոր իդէալն էր՝ սօցիալիստական կազմակերպութիւնը համայնական սկզբունքների, ազգերի եղբայրութեան խարիսխի վրաց։ Նա մինչև անշամ ընդնշմարում էր ապագայի մասախուղի մէջ մի այնպիսի դրութիւն, ուր խաղառ ջնջւած կը լինին ազգայնական առանձնայատկութիւններն ու խորութիւնները, բայց նա և գիտէր միաժամնակ, որ խրաքանչիւր մարդքաղացի պլասի աշխատէ իր հարազատ միջավայրում, պլասի ձգտէ իր սեփական ազգը բարձրացնելու . . .

Նրա սիրաը արիւնուում էր ի տես մահաշունչ իրականութեան, ուր հայ ժողովուրդը սափառած է կուել—և որպիսի ամրառ զո՞ղովութիւններով — ոչ թէ քաղաքական ու սօցիալիստ ոէֆօնների⁽²⁾ համար, այլ ամսնատարրական մարդկացին իրաւունքները ձեռք բերելու համար և ամենասուրբը բոլոր իրաւունքներից — ապրելու իրաւունքը . . .

Նա գիտակցում էր պատմութեան չարաշուք անօրինութիւնը, նա անխոռով զիմաւորում էր հայութեան բաժին՝ ու անօրինակ իրականութեան և շարունակ կոչ էր անում հայ ինտելիցիացին, յորդորում էր նրան դաւաճանութեան սպառնակիքներով՝ կանգնած մեռլ քաղաքացիական պարտքի բարձրութեան վրաց, լմբանել պա-

համաշներից ամենահրամացականը, ինամանլ վէրքերից ամենացառուց, չձգել մի ամեողջ արիւնլւայ ժողովուրդի սասաւ ճակասագրի։

Նա ինքը գնաց արեամ ու զո՞ղովութեան ճանապարհով, նա ինքը գահապէժ սլացաւ դէպի կեանքի յորձանուած հասանքը, ուսկից գարձ չկաց . . . Եւ ընկաւ կէս-ճանապարհին, շանթանարւած անարդ պատահարից . . .

Ընկաւ մեր հին սուածամարտիկը պարաւաճանաչ դինորի մահով, գործի, կուփ հնոցում, գլուխը հպարտ բարձրացրած, որպէս մի դարաւոր կազնի, անակնկալ կայծակից խորտակւած . . . Եւ այժմ նա հանգչում է այնտեղ, ուր միայն կարող է հանգչել անխանջ, մոլեռանդ աշխատաւորը . . .

Մաս ըարեաւ, ամսնուանալի ընկեր և սուածնորդ։ Կահգնած սպաւոր դերեզմանիդ առաջ քո զինակիցները կարող են կոչել քեզ։ «Դու զուր չաշխատեցիր, զուր չկուեցիր»։ Կալմակերպութիւնը, որին քո լսաւգոյն ուժերը աւիր, այսօր արդէն ամուր է, անսասան, նուիրուծ ժողովրդի պատուազրութեան գործին, սուգորւած այն սոհեջ, արրավան կրակով, որով զու ինքը էիր բոցավուած։ Այն հարիւրաւոր ու հազարաւոր երիտասարդ ներշնչուն էիր գու, յաւէտ կը պահեն քո մեծ յիշատակը իրենց սրաերում և ի կատար կ'ածեն այն նուիրական գործը, որ քո պաշտամոնքն էր և քո կտակն էր։

Մասս բարեաւ, տարաբախա ընկեր։ բանակալւթեան ճանկերում սեղմեւած՝ քեզ սիրող ու գուրգուրող երիտասարդութիւնը խուլ հեկիկանքներալ միայն արձագանք տւեց քո մահւան բօթին։ Հանգչե՛ր խաղաղութեամբ օսար երկնքի տակ, մինչեւ որ հացընի խեղդուկ մըմողորդը փոքր ինչ թարմանալով՝ երախտապարտ սերունդը ասանէ, ամփոփէ քո նշանաները իրենց արժանի

սրբավայրում — հայկական վերածնութեան ռահվիրաների շարքում։ Պատիւ յիշասակիվ, բազմասանջ ըսկեր։ Թող քո վեհ դէմքը գերեզմանից էլ չարունակէ աղդել ու սպեռիր հայ մարտիկներին և թող բռնակակալութիւնը, որի դէմ դու կաւեցիր ընկերների հետ սոսօվիկեան անսասանութեամբ, և որը միշտ ձգտում է խեղդել քո Գործը արեան հեղեղների, մարդկային սպանութանոցների մէջ, — թող նա դիասկցէ միանդամ ընդմիշտ, որ Քրիստովորներ ծողովաբողը երբէք չը մնանի . . . :

ՄԻՔ. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

«Երօշակ», 1905, թիւ 4



ԱՂԷՏԱԿՈՐ ՄԱՀԸ

Հոկտյուկան ծրագիրները գլխի մէջ, յափշտակւած ժողովուղական տանջանքների սփորհման իղձերով՝ հասպատում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր։ Կոլկասից անցաւ Շվեյցարիա, Ժոնէվից Բալկան, Վիէննայից նոր աղաւ Բուլգարիայի մայրաքաղաքը և այստեղ, բարեկամների և համախոների նեղ, բայց մոնղով չնանում, իր փայտայած ծրագիրների հոսցի մէջ՝ դառ աղէստուոր մահը, անսպասելի ինչպէս որու, շանթահարող, որպէս կայծակ։

Մարտի 4/17-ն էր Քրիստովոր Միքայէլեանը — ո՛չ, նրա մոներմական նողան չէ սաղում այս ձեր — Քրիստովորը ուղեկցուած ասանից աւելի ընկերներով, հայ և մակեդոն, զնաց մերձակայ լուներում թագնւած մը ձոր, ուումի փորձեր սնելու։ Կնեածեվօ զիւղի մօտ էր այդ։ Փորձի նպաստակն էր՝ պարզել ընկեր եղւարդին՝ այդ վառվուն յեղափոխականին՝ ուումբերի կատարելագործման նորանոր ձեւերը, մշակւած իր ձեռքով, արդիւնք երկար ամիսների տշխատանքի։ Ընկերական մը համեստ ձակերայթից յետոյ վիճակակից երկու աղդերի զաւակները դաշտ դուրս եկան։ Ակաւեցին փորձերն ու վիճարանութիւնները։ Տարբեր էին կարծիքները։ Ոմանք անուշողութիւն էին գուշակում, զգուշութեան յորդոր կարդալով։ Միւսները տատանուում էին։ Անյողդողդ էր միայն մէկը — Քրիստովորը, վասահ նախորդ փորձերին, հաւատացած մներկաց աջողութեան։

Ահա վերջապէս ոմբաձիգը՝ էդուարդ դիրք բռնից, Միւսները, զգուշութեան համար, հեռացան՝ աւելի բարձր

տեղից դիտելու պայմանին հետեւանքները : Անշարժ մնաց մըայն Քրիստովորը, անբաժան ումբածիդ ընկերոջից : Ոչ մի խնդիրք, ոչ մի յարդոր, ոչ մի նախազգաւշացումն՝ անդանան չ'արեց նրան . . .

Անցաւ մի քանի բռպէ : Ու յանկարծ որոտանման դպրուցը ցնցեց շրջակացքը, և ծուխի ամպը պատեց փորձի ամեազջ վայրը : Հեռացած ընկերները՝ ճնշող նախազգացումով ներքեւ պացան, նետեցին այն կողմը, որտեղ ումբածիդն էր կանգնած : Եւ նրանց աշքերի առջեւացեց սոսկաի ողբերգութեան ահաւոր տեսարանը . . . Քրիստովորը թաւալազգլոր, հաղիւ շունչը բերանին, եղուարդը հեռու նետուած, խրւած ձիւնախառն հողի մէջ՝ արդէն մահացած : Արտօնեցուցիչ լուսթեան մէջ, գերբնական ուժով, մի ճիշ լուեց : Ի՞նկերները օգնութեան յուահատական ճիգ արեցին — և անմնուանալի նահատակը, իրեւ (մնաք բարեաւ)ի վերջին նշան, փորձեց վերաբանալ մարած աշքերը, հայեց իր շուրջը, դիտեց հեռուն, շատ հեռուն և համոզաւ՝ առանց բառ անդամ արտասանելու . . .

Վէրքերը ծանր էին և կակծարեր : Էդուարդի ոմբողջ աջ երեալ, կրծքի աջ կողմը, ինչպէս և աջ ոսր, պատառուած էին և այլանդակւած : Աջ ձեռքը կարւած էր արմունկից : Խումբը կատարել էր իր աւերմունքը անխնայօթէն, կատաղութեամբ : Քրիստովորի վէրքերը, արդիւնք ուումբի նետուածքների, երեք էին : Երկուաը ձախ երեսին և ձախ ոսին — թեթև, և անկարեսոր : Երրորդ վէրքը, ուղիղ կրծքին — մահացու : Եթէ չլինէր ծոցի գրպանում պահած արծաթթեայ ծխառուփը, որը երկու տեղից ծակւած էր, սիրու պատառ-պատառ պիտի լինէր ամբողջովին : Անվեհներ գործիքների փսխարէն՝ երկու դիսկ : Այլ էր իրականութիւնը : Եւ նրանց վիրաւոր, յօշուած մարմնները, լնկած մի անհիւրընկալ ձարում, ձիւնի մէջ,

մնացին երկար ժամեր, չըսպանուած ոստիկանական պահպաններով, որոնց հրամայւած էր հակել, մի բռպէ իսկ աչք չհեռացնել «քաղաքական կարեւոր դէպքի» խորհրդաւոր գոհերից . . . :

Մարտի 10/23-ն է :

Թաղման սպաւոր օրը : Սօֆիայի հայկական անշուք մասունի մէջ երկու դագաղ են զրւած՝ կողք կողքի : Մեռան միասին, պիտի թաղւեն միասին : Խուռն բաղմութիւնը լցրել է մատուար, բակլը, հրապարակը : Մակերդն հայդուկները, մարտական համազգեստով, պատուի պահակն էին կազմում : Ահա աւարտեց ալօթքը, այնքան աններդաշնակ մարտիկ-յեղափոխականների ոգուն, սրտին, մտածմունքներին . . . և ժողովուրից՝ դադաղները ուսերին առած՝ շարժւեց գէպի գերեզմանատուն :

Եղանակը հրաշալի էր : Բուլգար ժողովրդի մի հոծ բաղմութիւն, անգամուած պատշգամներում և փողոցի երկու կողմը՝ պատկառամերով և վշտում դիտում էր հայկական նահատակութեան այս տիտուր համուշը : Առաջից գնում էր ներկայացուցիչների և համակրողների երկար շարքը, քառասունից աւելի պատմները ձեռքին բանած (գրանց թւում՝ Մակեդոնական կօմիտէի, Ռուսաց Սօցիալիստ-յեղափոխականների, Հնչակեան տեղ, մանաճիղի, Դաշնակցական խմբերի, Սարաֆօվի ևալլն) : Փոքրաբիւ հոգեւորական դասին հետեւում էր մի քանի հազարից բազկացած բաղմութիւնը՝ մեծ մասը մտկեդն և բուլգար, հայկական դատին համակրող տարրը : Եւ ամբողջ բաղմութեան վէրքն ու ցաւը ցոլանում, մարմնաւնում էր այն հնչիւնների մէջ, որ զինւորական նւազախումբը վարպետորէն ատրածում էր զոյտ դադաղների չուրջը, վշտանը սրաերի մէջ . . .

Հմնրացին գերեզմանատունը, երկու միանման փոսի շուրջը շարւած է բաղմութիւնը, յուղւած, մոալլաղէմ,

Քրիստի, Յիշ.

արտասուքը աչքերին։ Կին և տղամարդ, հայ և մակեդոն, յեղափոխական և համակրող — բոլորն էլ բռնկւած են նոյն ցաւով, խորունկ վշտի նախանման զգացմունքով։ Յարդակից լուսթեան ընդհատողը՝ զսպւած հեկիկանքն է, որ մերթ լնդ մերթ դուրս է նետուամ սիրող պատերից, անկարող դիմադրելու փոթորկող զգացմունքներին . . .

Աղօթքը աւարտւեց։ Հերթը հասաւ թաղման ախրագոյն էջերին — դամբանականներին։ Երկու էին խօսողները։ Մէկը հայերի կողմից՝ Խ. Մալումեան, միւսը մակեդոնացիների կողմից՝ Ս. Գերով։ Մակեդոնական շարժման անւանի զեկեվար՝ Բօրիս Սարաֆով, վերջին բոպէին, քաղաքական ստիպողական հանգամանքներից դրդւած, հարկադրւած էր խօսքից հրաժարել։

«Այս դագաղի մէջ — ասաց մեր հայ-ընկերը՝ վերջարանի մէջ — ամփոփւած է հայ յեղափոխութեան սիրալ և հայկական մարտնչող երիտասարդութեան փայփայանքը։ Դրչի վարպետ չէր մեր աննման ընկերը կամ շանթաճարող ճառասաց, և ոչ էլ հայդուկների զեկավար՝ Արեան երկրի փշոտ ձորերում։ Ոչ։ Նրա ուժն ու տուգանքը բնարոշելու համար՝ պէտք է հնարել մի նոր բառ, որ գոյութիւն չունի մեր լեզւի մէջ, — մարդագործ էր նա, մի հմայիչ, դիւթիչ ուժ, որ հրաշակերտում էր դադախարական մարդուը՝ խոպան, անհաչակ սրտերի ու ուղեղների մէջ, շաղկապում նրանց և ուղղում դէպի մտքի պայքար, դէպի յեղափոխական վերանորոգիչ կախը։

« . . . Զեղ, մակեդոն ընկերներ, ու ձեր հակողութեանն ենք յանձնում հայկական յեղափոխութեան անհըման վետերանը, անմոռաց Քրիտափորին՝ իր երիտասարդ բարեկամի հետ միապին, որ նրա գործակիցը եղաւ արիւնու յեղափոխութեան մէջ, և հարեւոնն՝ անտրիւն դամբարանում։ Այս երկու գերեզմանը թող հայ-մակեդոն դաշնակցութեան գրաւականը լինին, մշտական յու-

շարձմանը՝ մեր դժբախտութեան, մեր կուի, մեր գրաւիչ ապագայի։ Պահեցէք նրանց խնամքով, հակեցէք նրանց քնչութեամբ, մինչեւ այն Մեծ Օքը, երբ մեր ընկերները, անկասկած, աւելի երջանիկ քան մենք, դարձեալ մի անդամ կը գան նոյն այս քաղաքը, ո՛չ գլխիկոր և վշտաբեկ, ինչպէս մենք, այլ հագրտօրէն, անկնձիր ճակատով, այս չիւրընկալ երկրից ազատ-Հայաստան փոխադրելու նշխարները այն տարագիրների, որոնք իրենց շրջայակապ հայրենիքի մէջ, բռնապետութեան ճիրաններում աղմւած, մի գերեզմանատեղ անդամ չ'ունեն, — վերջին հանգստարանը բազմատանչ գործողների։ Այդ մածօրը պիտի գայ, որովհետեւ մեծ են զոհերը . . .»։

Բովանդակակաւոր և հմայիչ էր ընկեր-մակեդոնացունառը^(*)։ Ոգեւորւած չիշտով նա հայկական շարժման ուրագիծը տւեց և պատկերացրեց այն անմոռաց ու անձնւէր աշխատաւորներին, որոնք, մինը իրեւ քարոզող, միւսը որպէս մարտիկ, երրորդը ինչպէս կազմակերպող, հայկական ազատագրութիւնը հրաշակերտեցին։

Երկու օր յետոյ՝ թարմ և թանկագին հողակոյտի շուրջը՝ կանգնած էին սգուոր մտերիմները։ Վերջին այցն էր այդ։ Լի յուզմունքով, խորին լուսթեան ենթակաց, բոլորն էլ զերի էին հեռաւոր, տարբեր և սրտատրով յոշերի։ Մի ամբողջ կեանք, լի գրաւիչ դէպքերով, կապւած այդ գերեզմանի հետ — վերարտադրւեց իր ամբողջ ուժով։ «Նա չաեսաւ իր տանջանքի պտուղը, չվայցելեց ազատութեան արշալոյար»։

Մեր վերջին մրմունջն էր այդ։

Մնաս բարովի աղեխարչ մրմունջը . . .

«Դրօշակ», 1905, թիւ 4

Է. ԱԿՆՈՒՆԻ

(*) Յաւում ենք, որ այդ նառը ձեռքի տակ չունեն, ամբողջութեամբ առաջ թերելու համար։

Ե. Ա.

ՈՂԲԻ ՆԱՍԱԿ

Հայ Յեղափոխական Դաւանակցութեան

Ավ զարդուրանքի և արխանի տուսուատ, տող մը քու դժմեմ լայսերուդ մէջէն, ու ամէն նայուած ըներու բոլոր արցունքներն ասոր մէջ գտայ, ամէն հոգիի դառնակըս-կիծ հնձեանք, ամէն տուայտանք, ամէն գալարում, ամէն ալաղակ, ամէն հոնդին, ամէն գերեզման ասոր մէջ գտայ . . . Քրիստովոր Եւութ . . . Ան որ զմեզ իր չքնազ ու խորունկ հոգիովը կը մնուցանէր, ան որ քաղցր էր, ան որ անձառելիօրէն սիրող էր ու բաղմագութ ու բաղմաշարչար . . . Քրիստովորը, բովանդակէ էութիւն մը, հոգիի և դաղափարի տիեզերք մը, աղասութեան և փրկութեան լուսաւորիչ մը, վարդապետ մը և այսօր մհանեալ մը միանդամայն . . .

Օ՛, ի՞նչպէս ապրիլ այլես, ի՞նչպէս գոյութիւն ունե-նալ, ի՞նչպէս տեել, ի՞նչպէս կարենալ երազել . . . կը խողուխմ, ծանրածանր ցաւէն կը խորտակուիմ, կը ջախջախուիմ ու չեմ կրնար ինքիրմէն զուրս նետուիլ, իմ մէջս վար շրջող վիաստակներէն աղասուիլ, չեմ կրնար հասնիլ, վերջանալ, անէանալ, ու կատալութենէս ու անդօրութենէս ու տարփանքէս կուլամ, կուլամ . . .

Ավ գիտէ ի՞նչ պիտի ընեն անոնք որ հերոսներու պէս կը կուռին, ի՞նչ պիտի ընեն անոնք որ կը մտածեն, ի՞նչ պիտի ընեն անոնք որ երկիւզամօրէն կը յուսան, ի՞նչ պիտի ընէ հայութեան լաւագոյն մասը, ի՞նչ պիտի ընեն իր հաղարառոր գաղափարազաւակ աշակերտները, ի՞նչ պիտի ընեն անոնք որ զինքը կը պաշտեն, ի՞նչպէս պիտի միսիթարուխն, կարելի՞ է միսիթարուիլ այլես, թո՛ղ ըսին ինձի, թո՛ղ մարդու առջեւ չ'արիւնի, թո՛ղ մարդ մարդու առջեւ իր կերպարանքին վրայ մոխիր չի ցանէ . . .

Մանուան անունէն որ ինձի համար միայն պաշտելի Քրիստովորը տարած է, որբ աղջկան մը նման կը դպրուիմ, կոյրի մը նման կը հալածուիմ, առեւերի մը նման կը կորսուիմ, ու կեսանքի մը պէս կը մարդիմ . . . Ի՞նչ եւ-զար, անզուգական, ի՞նչ եղար, ամնորեաց մարսիրոս, ի՞նչ եղար, ովք բարոյատու, ի՞նչ եղար, ովք անհաւասարելի, արդար է այս, արդար է, բայց, ի՞նչ եղար . . . Ի՞նչպէս պիտի շարժին անոնք որ քու ազատախօս պատ-գամիերուդ և հայրական թեսերուդ տակ զինուորագրուեցան, ի՞նչ պիտի ընեն անոնք որ քու զէնքերովիդ զինուեցան, որ քու նայուած քներուդ առջեն իրենց ուխափ ժամերուն, ի՞նչ պի-տի ընեն անոնք սրոնց երազին մէջ Ե՞նովափ մը մեծութեամբը արձանացար: Ի՞նչպէս օգնութեան համար այս ամէննեն, ի՞նչպէս մանագուժել . . . Գետեն արգեօք այս յուսասառութեան և արիւնի տառաօտեան ժամուն, զի-տեն մանուանդ կործանարար լուրը, զիտեն որ զոհուեցար գուն՝ ամենօրեաց ողջակէզ . . . Թերես չեն զիտեր ու ասոր համար է որ կ'ասպրին, ասոր համար է որ ի-րենց լայն ուսերը չեն վլչիր, իրենց յուսալից աչուքները չեն կորանար, ասոր համար է որ իրենց քաղլիրը կը յառաջանան ու իրենց կամքերը կ'երկաթուին . . . Թո՛ղ չի զիտեանն քու աւերիչ մանուանդ լուրը, թո՛ղ մարդ մարդու առջեւ չի խօսի, թո՛ղ մարդ մարդու առջեւ չար-տառուէ, թո՛ղ մարդ մարդու առջեւ իր սիրուր չի բանայ, թո՛ղ մարդ մարդու առջեւ չ'արիւնի, թո՛ղ մարդ մարդու առջեւ իր կերպարանքին վրայ մոխիր չի ցանէ . . .

Բացց ես լեռնաւոր ցաւին տակ մինակ եմ, միս մի-նակ, կորչք մը չի կայ որուն վրայ կործանուիմ, նայ-ւածք մը չի կայ որուն մէջ աղաստանիմ, ձեռք մը չի կաց

որուն մահասարսուռ ձեռուըներս երկարեմ . ոսկրակոյտ
մին եմ անպատճի մը մէջ և չարաշուք իրիկուան մը ա-
րիւնոտ անձրեխն տակ . . . Օ՛, սուերներ կ'անցնին քո-
վերէս, ապառաժակերպ ուրուականներ, սուգիս ու մտա-
ծումիս հորդուններէն, և ահաւասիկ որ կը յառաջանայ,
օ գթութիւն, գթութիւն, ահաւասիկ որ Մղձաւանջս
կը յառաջանայ, իր հովէ թեերը կը զարնէ, իր ագուաւա-
խումբի թեերը կը փոթորկէ, իր բուփ և մեռելորփ ա-
ղաղակը կուլայ, իր անողորմ դագաղին տախտակները
և շարժէ, իր սպիտակ պատանքները իմ վրաս կը նետէ
և իր կարմիր խենթութիւնը, իր թունաւոր խենթու-
թիւնը իմ մտածումիս անդունդներուն մէջը կը հոսե-
ցընէ . . . Ու մահը, զայրապին մահը, մարմարակերպ մահը,
համայնակուլ մահը ուսերուս վրան կը խոկայ, մահուան
ամբոխներ ուսերուս վրան են, ու ես լնկճուածս, ես
թշուասս, ես երազողս, ես յուսացողս, կը ծոփմ, կը
դողդոջէմ, կը փլատակուփմ, արցուքներս կուղան յոր-
դահուան, ու յանկարծօրէն երեսս յես կը դարձնեմ, ու
ինչ անդորրոյն ցնորք, ինչ պատիկը, ինչ քաղցրու-
թիւն, ինչ ժափտ, ինչ մեծութիւն, ու կը տեսնեմ զին-
քը, կը տեսնեմ ամենամեծ Քրիստափորը, ու կը գրկեմ
ու կը փաթթուփմ ու կարօտակէզ դաւկի մը նման կը
համբուրեմ, կը համբուրեմ, կը համբուրեմ . . . Ու արիւնո
արիւնին կը խառնուի, արցունքներս իր աչքերուն մէջ իր
արցունքներուն կը միանան, ատելութիւնս իր չի յագեց-
ած ատելութիւնին կը ծովանայ ու սէրս կ'արեգակուփ
և յայսիս աշտարակները նորէն կը կատուցուին . . . Ի՞՞ջ
է : Բայց աւա՛ղ, աւա՛ղ, ցնորսապատկերը անդթօրէն կ'ան-
հետանայ, ուրուագծերը կ'արիւնին, պաշտելի ձեերը կը
խորտակուին ու դիակը, հրեշտակացին մարմնը, բաժան
բաժան, նշխար առ նշխար, կուրծքիս ու հոգիս վրան
կը ծանրանան . . .

Ու հիմայ գիտեմ, յատակօրէն կը տեսնեմ, ճակատա-
գրին ձեռքերը, երկաթէ ձեռքերը, չարազօր ձեռքերը
որ Քրիստափորը սիստներուն, Քրիստափորը պաշտողնե-
րուն վիզերուն կ'երկարին՝ գաղանօրէն սեղմելով, և ա-
հաւասիկ, մտիկ ըրէք, հեծկլատանքներ, աղաղակներ,
ոգեվարքի հանդիւններ, հաղարաւոր բերաններէ, հազա-
րաւոր ուխտուածներէ, օ ինչ մեռելածայն և ինչ սրաւ-
կեղեք համանուագ, վասն զի տափկայ մահագոյժն է, ա-
ղէտքն է, չարիքին դողանջն է որ Եւրոպայէն կովկաս և
կովկասէն Հայաստան եղենականօրէն հնչեց : Սմէն մարդ-
իմացաւ հիմայ, ամէն մարդ ինքիր մէջ կ'աւերակուի,
ամէն մարդ իր հոգիին մէջ այս մահագոյժը կը լսէ՝ ինչպէս
գերեղմասսփորի մը բահին ձայնը հողը պեղած պահուն . . .

Բայց միմիթարութիւնը նորէն ու նորէն ձեղմէ պիտի
դայ, ով սիրական ու հեռաւոր ու հերոսական հայդուկ-
ներ, միմիթարութիւնը ձեր կամքէն, ձեր զօրութիւնէն,
ձեր յաղթանակներէն պիտի դայ . . . Արցունքները մեղի՝
տկարներուս, անդործօններուս ձգեցէք, դիտեմ որ ար-
ցունքները ձեր արիւն-ծարաւ աշուըներուն ու ձեր կըտ-
րիմի հողիներուն չեն վայելեր : Մեր փրկութեան հիմնու-
գիրներէն մէկը մեռաւ և իր զոհաբերումը զմեզ աւելի
պիտի սրտապնդէ : Քրիստափորին պատկերը, պաշտելի
պատկերը Քրիստափորին՝ ամէն տուն, ամէն երդիք, ա-
մէն ցաւի առջև, ամէն խրախուանքի ժամուն, ամէն
կոխի գերազայն վայրկեաններուն, պիտի յաճախէ և
պիտի յուսաղը . . . Իր արեգակեայ հոգինս ոսկիէ գուռ-
ներէն ներս նայինք ու մեր արիւնը պիտի հրավառուի,
մեր խանդը պիտի եռայ, մեր բազուկները աւելի ուժով
պիտի զարնեն : Իր գերեցմանը մեր խորանն է այլևս, իր
անունը մեր առջև բացուած աղասազիրքը և իր յիշատա-
կը մեր բոլորին ռահպիրան :

Եղայրօրէն ցաւակից և առյաւէտ ոգտուոր՝

ՄԱՐԴ ՄԸ

Պուլկարիոյ տղատ լեռներէն, ուր երգեմն բարբարս գաղանութիւնները արհաւիրք և արփւնի հեղեղներ քաշոցին, երկու յեղափոխական ընկերներու ողբերգական և սրածածմիկ մահւան գոյժը կը հասնի մազի:

Այդ զոյզ մը անսպասելի մահերան առջև պէտք էինք ունենալ գերմարդկային ուժ՝ որ չզգայինք կակիծին մհծութիւնը:

Քրիստոփոր Միքայէլեան, բիւրեղացած բարոյական ուժ մն էր իր լիակատար և արգասաւոր հասունութեանը մէջ, Եղւարդ երիտասարդ մաքուր ուժ մը՝ որ ճնոր գարուն» կը բերէր յեղափոխութեան գործն: Երկուքն ալ զո՞ն ինկան ուռմբի անզդոյլ պալիւմէն: Զէ՝ որ տղասութիւնը արփւնի անկուշտ, բայց հմայիչ զաւակն է, որուն բոցերուն զո՞ն կ'երթան յաճախ սիրահար թիթեռնիկները:

Տիբագդեցիկ բան է, երբ թշնամին արւելիք հարւածը ետ կը դանայ, ճակատաղը կոյր անողոքաթիւնով մը, և կը տապալէ անբախտ ազգի մը զտած, մաքրագործած հրեղէն հոգիները, որ անոր յոյսի և ազատութեան ունվիրանմը էին:

Քրիստոփոր Միքայէլեան մոր յեղափոխական սրածութեան «անզոգական» դէմքը պիտի մնայ: Սրսակարդ էսկ մը չէր զուցէ, հիանալի էր սակայն: Զէ հղած մոր գործնէութեան շրջանին մէջ այլ քամ ընդհանուր համակրանք ներչնչող դէմք մը, որ իր պաշտած գործին խոր և արշնչելի դրոշմը կրոծ ըլլայ: Ազգային մհծ հեղինակի մը կամ նոյն իսկ մնծ գործիչի մը մահին

առջև ազգովին կակիծ մը կ'առնենանք, բայց անոնք որ ձանչցան Միքայէլեանը՝ իրմաց գնահատումին և վշտին մէջ կը դնեն բան մը խորանի, գործվալից, եղբայրական և ընկերական: Մարդն էր իր բարոյական մնծութեան մէջ՝ որ կեանքի աղը կը կազմէ և ընդհանուր գործին ուժը: Զարմանալի չէ որ նորահաւ երիտասարդութիւնը, սերունդը աղգային երկունքին և ձիչին, որ արփւնի աւազանին մէջ խաչակինքնեցաւ, զինքը անսւանած ըլլայ «հայրիկ»: Այս, հեղեղ ու բարուատ արփւնի դաշտերուն մէջ ծլած երիտասարդութիւնն է՝ որուն մէջ, որ օրի և աւելի ու աւելի կուռածնոց աղգային ողին, պարտականութիւնը և անոր խեչալի յաղթանակը, և որ հապատարէն վեր կը բարձրացնէ իր բնկճւած զլումը ու կ'ըսէ. «ևս այ հայ եմ»:

Այդ ծագիկ և խանդավառ երիտասարդութիւնը ձանչցաւ, սիրեց ու յարգեց Միքայէլեանը և լացաւ «հայրիկի» գերեզմանին վրայ:

Զո՞ր մեծ էր և առելի կը չեշտուի այդ կէտը, երբ նկատի ունենանք այն գմնդակ ձեռնարկը որուն լծւած է հայ ազգը:

Անջնջիկ պիտի մնայ այն տեղոյն դէմքը, որ իր մազերուն ներմակ արդասաւորութեան տակ, սուս ոչնչականի մը անդորր յուղումնի, անձնուիրութիւնը, անշկրծութիւնը և պարկիշտութիւնը կը տպաւորէր:

Այդ գունատ ու ճգնական արտայացութիւնով մարդը ապագայի հզօր և անդիմաղքիլի հաւատքանի էր որ կանգուն կը մնար, և ինչպէս կ'ըսէր ընկեր մը «հրաշքով կ'ապրէր» քան հացով ու ջրով: Իր հետ խօսովը պատրանքը կ'զգար աննիւթ կամ խեչալացած էսկի մը, այնքան իր հոգին կը ափատկետէր մարմին:

Իր խօսակցութեանը մէջ, այնքան չերժ, այնքան հրապուրիչ և այնքան անվերապահ, ունէր մոլեւանդ հա-

ւատացեսովի մը՝ պրազան հետքը և մարդկային անիրաւութիւններուն դէմ զայրագին և անդնդային հառաջներ : Իր խոնջ և թափանցուն ապրուծքին մէջ կը խստանային իր խեցը, զգացումները և իր հոգիին տառապանքները : Վիզական դէմք մըն էր, կամ իրականութեան ստեր մը, խորոնիկ երազանքներով և իրապաշտ դասողութիւնով :

Պէտք է տեսնել իր զայրոյթի բոպէները որոնք հաշ սարակական գործին հետ կապ ունեին :

Անոր պայծառ սրտմութեան մէջ չկար մտղձ ու թոյն, այլ վսեմ գեղեցկութիւն մը, որուն առջեւ սքանչացած հանդիսատեսով, վախճառով աւրել այդ աղւոր զայրոյթին համույքը, լուս և պիշ կը հետեւէր անոր հաշտն և անարատ ելեջներուն ու թրթուումներուն, որ ամրող ներքին աշխարհի մը փոթորկալից հրապարցը վեր կը հանէին :

Կրթւած և մնած լլալով ոռւս յեղտիոխական զուտ խուալական մթնոլորտին մէջ, ուր մարդը զո՞նաբերութեան անգուստ տենչով մը կ'անէանայ զալափարի մնծութեան առջեւ, Քրիստոփոր Միքայէլեան բոլորանուէր թափով մը նետուծ էր իր դժբախտ հայրենիքի աղասապրութեան պայքարին մէջ, որուն, մինչեւ իր եղերական մահը, անխոնջ, սրտոտ և համեստ գործաւորն եղաւ . գործնէութիւն մը որ այդ աղազուն և զէ գին մէջ գտաւ կորովի և բարոյական առաքինութեան մշտնջենական վերածնութիւն մը և ատրուչան մը :

Եւ ո՞վ աւելի պէտք ունէր բարոյական կորովի քան իր անբախտ հայրենիքը ...

Իր նկարագիրը իրը մարդ, յեղափոխական և իրը ընկերական էակ բարձր էր և անբախիր : Մարգեղացած հմայք մըն էր և զինքը ճանչցողները անկարելի է որ չկախարդւէին ու չգտնէին անոր մէջ ճշմարիտ և անձնութիւնով :

բաց յեղափոխականը : Պարզ էր իր կեանքի մէջ, մանկան ողիի պէս չինչ պարզութիւն մը, այնպէս որ մանկավարժի մը զարմանալի համբերատարութիւնով և հայրական հաճոյակատարութիւնով մը կը նստէր և շահեկան նիւթեր կը գանէր խօսելու մանուկին և պատմիին հետ և ամէնուն հետ :

Զջանաց պարուրովիլ արւեստական ամպերու մէջ կամ Սինայի վրայ բարձրանալ ժողովուրդին կուռք մը լլալու համար, ինչպէս կը տեսնենք ծանծաղամիտներու մօտ, որ իրենց ոչնչութիւնը սքօղելու համար, ամպերու մէջէ կը սիրեն պատգամել և միշտ իրենք զիրենք գաղտնի և խորհրդաւոր կը պահեն ու ամ ի կ ամբոխէն :

Քրիստոփոր Միքայէլեան կեանքն էր, և կը սիրէր ապրիլ իր ժողովուրդին հետ և անոր ալեկոծ ու վշտոտ կեանքին մէջ : Նահապետական կեանքի հեռաւոր ցոլք մը, վերյուշում մը կար անոր մէջ : Իր սիրար, իր հոգին, ինչպէս իր տունը բաց էին հատարակութեան առջեւ :

Իր գաղափարական և հասարակական գործիչ, որուն համար ստեղծւած էր, իր պաշտօնին բարձր առաքինութիւնը և խոնդավառ և անվեհներ դիտակցութիւնն ունէր :

Դործին լծեցաւ առաքեալի անցողդողդ հաւատքով ու նէիրմունքով և մինչեւ վերջ ցոյց տւաւ աննկուն կամք և անչէջ նուանդ սրավ կը մաղնիսացնէր նոր սերունդը և կը սիրցնէր ու պաշտելի կ'ընէր գործ :

Եթէ ինչ ինչ պարագաներու մէջ խղճահար նկատումներ և վերապահումներ ունեցաւ, գործին կաղմակիրպական նախանձախմնդրութիւնը և ծայրացեղօրէն պրտցամտահոգութիւնն էր որ կը թելաղրէին աս իրեն : Իր բոլոր էռութիւնը ելեկարացած էր գործին սիրով և անձուրացութիւնով : Լաւատես էր որովհետև յաւիտենական պայքարող մըն էր . և իր տարիները միործելով աղգացին գործի

կենսականութեան մէջ, ինչպէս ժուլտմանի աղբիւրի մը
մէջ, նոր և թարմ ուժ կ'առնէին՝ մշշա կազմ ու պատ-
րաստ պատմութեան և բախտի անդիւթեան դէմ մե-
նամարտը վետակսելու :

Անկարելի է որ չողբան զինքը ճամշցողները : Կովկա-
սը պարտաւոր էր սպալ և ցնցւիլ այդ մեծ Յեղափոխա-
կանի կորուստին առջև, որուն բարոյական հեղինակու-
թիւնը այնքան մաքուր և այնքան տիրական եղաւ և ո-
րուն յիշատակը նւիրական յորդանքով մը պիտի պահէր :

Կովկասի և արտասահմանի մէջ արտայայտած տիե-
զերական համակրանքը, հոգեհանգիստները և փառաւոր
յուղարկաւորութիւնը, միմիթարական ապացոյցներ են թէ
հայ ժողովուրդը զիտէ գնահատել բարոյական ուժը
և արժանիքը որ աղջի մը մածութեան հիմքը ու էութիւնը
կը կողմնն, կը ճանչնայ և կը սրբադարձէ այն ազնիւ ու
անձնւէր ծառայութիւնները որուն կարօտ է մեր մարտի-
րոսացած հայրենիքը : Ոտոսահայ կղերը չէր սխալեր եթէ
իր հոգեհանգստին մէջ կրկնէր աստածանչական բնաբանը .

«Եւ իրադէլ մեծ մարդ մը կորանցուց այսօր» . . .

Յեղափոխութիւնը և մեր դաստի ազնիւ և հոյտկապ
դէմք մը կը կորսնցնէ իր պատնէշի վրայէն, անուբանալի է :
Սակայն այն գործը, որուն զիխաւոր հիմնաղիներէն
և մշակներէն մէկը եղաւ Քրիստութիւր, պիտի շարունակի
սրասնւէր եռամողով և նոյն անխոնչ թափալ ու եղբայ-
րակցութիւնով :

Քրիստութիւր Միքայէլեան լայն ու լուսեղէն ակօններ
բացաւ յեղափոխութեան դաշտին մէջ և ցանեց հնա բա-
րոյական ասովծ ու զիտակից սերմը . սակայն ցաւ է որ
ինկաւ իր նպաստակին և իր փայլայտ գործին կէս ճամ-
բան : Իր դիմակին վրայ, որ մայրենի անուշ հողէն զրկած
է, բարոյական մարդն է որ վեհ յիշատակարանի մը պէս
վեր կը պահայ :

Հոդ է մեր միմիթանութիւնը : Այդ հմացքը յեղա-
փոխութեան ժառանգն է :

Իր թարմ և արտասահմանոր գերեզմանին առջեւ հարկ
է չորս հողմնուն յանձնել Շեյքսպիրի խօսքերը առա-
քինի Բրուտոսի վրայ .

His life was gentle; and the elements
So mixed in him, that the nature might stand up
And say to all the world: **This was a man.** (*)

Ա. ԱՌՈՅ

Հայրենիք, Պուրոն, 1905, թիւ 18

(*) Եր կեանքը վեմ եր: Տարրերը իր մէջ այնպէս լա-
րադիացան էին, որ Ընուրիսն կրնաւ ոտի կանգնիլ եւ ամ-
բողջ աշխարհին ըսել . «Սա մարդ մըն եր»

ԼԱԻ ՄԱՐԴՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բագուի լրագիրներից մէկի առաջին երեսում—մի շարք սե յայտարարութիւններ : Սև ենք անուանում մնաք, լրադրական աշխատողներս, այն յայտարարութիւնները, որոնք հաստ սե չընանակների միջից գուժում են մէկի մահը :

Պատահում է, որ դրանք շատ են լինում մի օրվայ մէջ . պատահում է, որ լրագրի առաջին երեսը մի ամբողջ գերեզմանոց է ներկայացնում : Այդպէս էր և Բագուի լրագրի այդ համարը : Եւ այդ սեւերի մէջ մէկը, մի անուն, դրոշմված խոշոր, սե տառերով, պարզ ու անողոք, անհերքելի, ինչպէս ինքը, մահը -----:

Ռուսերէն և հայերէն խոշոր տառերը ապացուցին, որ նա չը կայ այլես :

Ո՞վ :

«Մեր Քրիստոնիորը» :

Քրիստոնիորը շատ կան : Բայց մի հատիկ էր այն Քրիստոնիորը, որին անփոփոխ կպած էր այդ մտերմական «մեր»ը : Ամեն մէկը նրան համարում էր իրանը : Եւ նա իր ամբողջ էռթեամբ մի փայլուն փաստ էր, որ դա որ խալ չէ, որ ինքը պատկանում է ամենքին և ամենքից յետոյ, ամենքից քիչ՝ իրան :

Ես զոնէ այսպէս էի ճանաչում և հասկանում Քրիստոնիոր Միքայէլեանին մեր ընկերական չընաներում :

Եօթը-ութ տարի առաջ էր : Լրագրական գործը զիշերային երկար աշխատանք էր պահանջում, և ես յանախ

խմբագրատանից դուրս էի գալիս գիշերվայ ժամը 2-ի կամ 3-ի միջոցներին :

Այդ ժամերին, երբ երթեւեկութիւնը թիֆլիսի փողոցներում դադարում է և քնչած մնաելութիւնն է սկսում տիրել ամեն տեղ, ինձ շատ յաճախ վիճակվում էր մի շատ ախորժելի հանդիպման ուրախութիւնը : Գոլօվինակի պրոսպեկտում, Կօղօվակու տաղարանի կողմէց, իր հանդարս, բնորոշ քայլերով, զէմս էր գալիս «մեր Քրիստովոր»ը :

Նա էլ լրագրական անանուն, անյայտ բանուոր էր : Էով ապրուստի միջոցներ գանելու համար տարիներից ի վեր կատարում էր «Նօվօյէ Աբագրէնիէ» լրագրի սըրբագրիչի մաշեցնող պաշտօնը :

Հանդիպում էինք իրար, մոռանում էինք յոգնածութիւնը, գիշերային ուշ ժամը, յաջորդ առաւօտից սպասող աշխատանիքը : Եւ մոռացողը ես չէի երբէք, այնա, միմիայն նա : Այդ կարողութիւնը առատ չափերով նրան էր տրված :

Սկզբում մի փոքրիկ նախաբան նրա կողմէց, մի քանի միանման խօսքեր թէ այս գիշեր գործակալական հեռագիրներն ուշացան և նա նոր միայն վերջացրեց դրանց սբագրութիւնը : Բայց այդ խօսքերի մէջ բանուորի գանդասի, յոգնածութեան նշոյլ անդամ չըր նկատվում : Կեանքի հանգամանքները, որոնք այս կամ այն կերպ ազդում են անձնականի վրայ, ոչնչ նշանակութիւն չունէին նրա համար : Այդ կողմից «մեր Քրիստոնիոր»ը, չը նայած իր վախտ, վիրուն արտաքինին, երկաթէ մարդ էր : Ճիշտ երկաթէ : Միայն երկաթը կարող է այնքան անհոգի սասնութեամբ վերաբերվել դէպի աշխարհը Եղրդեցնող կենսական հոգսերը — զգեսափ, ուահլիքի, կուշտ ու հանդիսական լինելու հոգսերը ...

Թե՛մէ առաջարանից յետոյ նա խոկոյն անցնում էր

օրվայ խօսք ու զբոցներին, փաստերին, բէալականութեան: Պրծաւ: Այլևս չեր կարելի դուրս գալ նրա դիւթող իշխանութեան տակից:

Ու մենք հանդարս, դանդաղ սկսում էինք քաղել խուլ ամայութեան մէջ: Մենաւոր, ուշացած, շտապող անցորդները, մի մի անգամ զգրդացող կառքերը — ոչինչ, ոչինչ չը կարող կտրել խօսակցութեան թելը, զրաւել իմ ուշաղրութիւնը դէպի մի այլ կողմ: Թիֆլիսի լոպտերների ազօտ լուսաւորութեան մէջ այդ վտիս, զուստ, բաց համակրելի, ինտելիգենտ գէմքն էր, որ ամեն անդամ նոր և նոր ոյժով, զրաւչութեամբ յափշտակում էր իմ ամբողջ ուշըն ու միտքը: Սպիտակ ակնոցների ետեւից նայող բարի աշքերը, շրթունքների վրաց մշտապէս խաղաղաց մնջմ ժայռու, որ փափկներ էր կաղմում նոր միրուքով ծածկված այսերի վրաց, — այդ բոլոր քնքոց, հանդարս զծերը այնքան հարազատ, այնքան մտերական էին, որ չը կարելի նրանց համար չը մոռնուի և՛ քուն, և՛ հանդասութիւն:

Եւ ես առաջում էի հրան լսելու, նրան առարկելու, հակառակիլու, նրա հետ վերջի վերջոյ համաձայնվելու հաճոյքով: Եւ ինչն էր այդ հաճոյքի զաղոմիքը: Ո՞չ հսկորական կարողութիւն էր տուած նրան, ո՞չ նոյն իսկ միջակ պերճախոսութիւն: Բայց կեանքի հարուստիվորձը, ուժեղ ու առողջ լոգիկան(6), զարգացումը, լուսաւոր հայ եացքները գրաւիչ, ախորժալուր էին դարձում նրա հասարակ, անարաւուս խօսքը:

Այդքանը, ի հարկի, բաւական չէ: կալով նրան, իսկոյն կարելի էր հասկալ թէ ինչով է ապրում ապրուատի վերաբերմամբ այնքան անհոգ այդ մարզը, թէ մըն է այն կերակուրը, որ կեանքի ջերմութիւն, հունդ էր պահպանում այդ կաղմուածքի մէջ: Ահա այս էր պլաստորը:

Մեր Եղիշէն, նկարագրելով հինգերորդ դարի հայ հերոս կանանց, նմաննեցնում է նրանց անարիւն ձպուռների, որոնք ապրում են իրանց երգերի քաղցրութեամբ, կերակրի կարիք չունեն, կենդանի են մնում միայն օդը ծծելով և անմարդին էակների օրինակն են հանդիսացնում:

Սա բանաստեղծական անկարելիութիւն չէ, այլ մարդկային բնաւորութեան մէջ թագնված հերոսական գծերի ձիւդ նկարագրութիւն: Նիւթական աշխարհում զաղափարներով և միամիայն զաղափարներով ապրող անհատներ — ահա անմարդների օրինակ բերող հերոսութիւնը, մի հերոսութիւն, որի համար անպատճառ պատերազմական դաշտեր և բարձրագոչ, անեղ մեծագործութիւններ չեն հարկաւոր, որ կարող է ծլել ու ծաղկել և սպարական, մոխրագոյն աշխարհում, իրեւ առօրեայ կեանքի խորչերից մէկը զարդարու տասուուածային ջերմութիւն:

Համաստութեան, անհաման պարզութեան տակ թագնված անհման գոհարներ, — ահա ինչով է երկինքը յաճախ օրհնում ցաւելի հայրենիք ներկայացնող միր աշխարհը: «Մեր Քրիստոփոր»ը այդ համեստութեան ու պարզութեան մի ծայրագոյն օրինակ, Եղիշէի գեղանկարած հերոսութեան մի նմուշն էր: Նա էլ մի ճագուռ էր: Նրա կամաւոր աղքատութիւնը, անարծաթութիւնը, նրա մարմինը ծածկող հոտիները երբէք թոյլ չին տալիս, որ այդ մարդու վերաբերութեամբ որեւէ նիւթական, շահագիտական հասկայողութիւն ոչ միայն կազմվի, այլ և կազմվելու հարաւորութիւն անդամ ունենա: Նա էլ ապրում էր իր սեփական երգի քաղցրութիւնը ծծելով: Իսկ նրա երգը կեանքի ընթացքում, մինչև վերջը, մէկ էր — զաղափարը...»

Օդ և գաղափար — այսքանն էլ շատ բաւական էր, որ նա ապրեր մարդկութեան մէջ, ապրէր ոչ թէ իրու մի գաղափարած յունեսես, այլ իրրե անսահման հաւատ և

լցված, գարմանալի սիրող և կենսաթրթիւս սրտի տէր մի մարդ, ապրէր միշտ առողջ ու անկորուն, դառնութիւն, վիշտ ու զրկանք արհամարհող: Հայր խլելով նրա ձեռքից, չէր կարելի նրան սպանել, — նա կարող էր առանց հացի էլ ապրել: Նրան սպանելու համար բաւական էր մի բան—չարգել, ոչնչացնել գաղափարը. առանց սրան նա, ճիշդ որ, չէր ապրի և ո՛չ մի բոպէ:

Այդ գաղափարամոլութիւնը ձուլվել էր նրա գոյութեան ամեն մի փաստի հետ և նա յիշեցնում էր ինչ-որ անցած էպիքական⁽¹⁷⁾ շրջանների մի մարդ, որին չէր կարելի հասկանալ մեր գործնական ժամանակներում: Սեփականութիւն նա չունէր, նրա աղքատիկ բնակարանը, նրա մաշեցնող աշխատանքի հայթայթած դրամական միջնուները հաւասար իրաւունքներով պատկանում էին և նրա ընկերներն ու ծանօթներն ։ Նրա մօտ մանում էին առանց հարցնելու. և նա ուրախ էր, որ այդպէս են վարդում իր հետ: Նա ինքը քնում էր չոր յատակի վրա, որպէսզի հիւրերը քնին նրա մահճակալի վրա, նրա անկողնի մէջ:

Չէր կարելի այդ մարդուն երեւակայել անգամ չարքաշութիւնից, զրկանքներից դուրս: Կարծես բոլորովին անհարին բան էր նրա համար ապրել փոքր իշտաէ բարեկեցիկ, փոքր իշտաէ յարմար պայմանների մէջ: Աղքատութեան, կարիքի պողպատէ ճիրտնները միշտ հարկառոր էին, որպէս զի այդ բիւրելեայ, քնքոյն, սիրող սիրար ցոյց տայ իր ոտոյիկեան ամեսող կորովը, որպէս զի կարողանաց սիրո տալ, տաքացնել դառնութիւններից յուսահատվածներին, որպէս զի ինքն իրան զրկելով, հայրական և եղբայրական գթառասութեամբ ինսամէ, փայփայէ իր սիրելիններին: Խոկ սիրելիններ նա շատ ունէր — նրա գաղափարակիցները: Նրան գանում էին, որոնում էին և նա ինքն էլ որոնող էր, գտնող էր:

Բուռն, հրաբլիսային բնաւորութիւն չէր «միր Քրիս-

տափոր»ը: Ընդհակառակը — չափազանց խմարհ: Բայց նա մի շատ փայտուն ապացոյց էր, որ այդ հեզ ու մազմ յատկութիւնների տակ էլ կարող է անսասան համոզունք, անյողողութ վճռականութիւն, տոկուն հաստատակամութիւն ամբարված լինել: Դա ժայռի ճակատից աղմուկով ու որոտավ ցած նեսվող մի վտակ չէր, այլ գլաւր մարզի մէջ անձայն դուրս հոսող մի յորդառատ, վճիտ աղբիւր, որի ակը երբէք չի նուազում, որի ջրերը չեն կանգնում արգելքների առաջ:

Միշտ սաստիկ խիստ, պահանջկոս իր վերաբերմամբ, նա զարմանալի ներողամիտ էր դէսի ուրիշների պակասութիւնները: Ներել գիտէր նա անսահման չափերով: Թուում էր, թէ մարդկանց մէջ հաշմութիւն, միութիւն տարածելու համար էր նա ստեղծված: Բայց ո՛չ: Ներել չէր կարող նա միայն մի բան — գաղափարական դաւանականութիւնը: Այսաւզ — ոչ մի զիջում: Այսաւզ նոյնիսկ բռնակալութեան ընդունակ էր դառնում այդ հեզ, բարի մարդը:

Նրա հետ կարելի էր երկար ու երկար վիճել, կարելի էր չը հստանել նրա հայեացքները, կարելի էր նոյն բակ գատապարտել նրա գաղափարական աղանդաւորութիւնը, որ մի անփուսափելի բան է այդպիսի մարդկանց մէջ: Բայց և այդպէս, մնալով սեփական կարծիքի և համոզմունքների մէջ, չէր կարելի այնու ամենային համոզմունքների մէջ, չէր կարելի այնու մեծարել չը յարգել, չը սիրել նրան ամբողջ սրտով, չը մեծարել նրա մէջ անհուն ու անսպառ եռանդը, չը մեծարել և մտքի փանատիկովին:

Մտքի, գաղափարի փանատիկուներ . . . Սրանք են կեանքի զարգերը, սրանք են զրանիտեայ փարուների պէս՝ կանգում կեանքի ալեկոծված, խաւոր ովկիանոսում:

Մեր գիշերային համովալումները շատ երկար չը շա-

րունոկվեցին։ Վերջապէս նրան մի օգնական էին առողջ և նա կարող էր գտնէ հեռագիրների կէս-զիշերային սրբագրութիւններից ազատվել։

Բայց երկուսս էլ լրագրական աշխատաղներ էինք, և հասարակական, գրական, կուսակցական հարցերը այնուհետեւ էլ չատ յածախ հանդիպեցնում էին մեզ՝ մտքեր փոխանակելու համար։ Մի և նոյն շրջանի, միենոյն աշխարհացեցողութիւնների մարդիկո շուտ շուտ էինք հաւաքսմբում, և «մեր Քրիստովոր»ը, միշտ լաւատեղեակ, միշտ հրդինակաւոր, մար շրջանների տէքն էր, հոգին էր։

Նա հեռացաւ Թիֆլիսից, և ես այնուհետեւ երբէք չը տեսաց նրան, գրաւոր յարաբերութիւններ էլ չունեցայ նրա հետ։ Բայց այդպիսի ընկերները երբէք չն մասացվում։ Եւ ամեն ժամանակ, երբ պէտք էր երեւակայել բարի, անձնուելը սիրառաստ եղար, անմիեղծ բարեկամի, անչչծ գաղափարներով վառված հեղ գործիչի տիպը, իմ մտքի մէջ խալոյն պատկերանում էր «մեր Քրիստովոր»ի գունաստ, նիհար, համակրելի դէմքը, որի մի հաստ դիճն անդամ չէ ջնջվել արախ մէջ։

Եւ այդ սիրելի դէմքը այսօր սուզի շրջանուի մէջ դրսած մի անուն է միայն։

Անուն մշաբն, այս՛, բայց ի՞նչ անուն . . .



ՈՎ ԷՐ ՔՐԻՍՏԱՓՈՐԸ

Թող ծածանի ազատութեան դրօշակը, րող ժողովուրդը և ամենի նրա հմայքը, այն ժամանակ նրա պաշտպան հերոսներն էլ սննդակառ կը լինենի...։

ԳԱՐԻԲԱԼԴԻ

Հասարակական կեանքն այն եռուն նորոն է, որ իր կրակոս թափով առաջ է մղում ժամանակի պահանջները և ձուլում ու ձեւակերպում է նրանց գործները։

Եւ այդ գործների շարքում շատ յաճախ աչքի ընկնող գեր են կատարում առանձին անհասները, եթէ նրանք ըմբռնել են ժամանակի ոգին, եթէ ունեն որոշ եղէալներ ու համոզմունքներ և գիտեն միշտ անյոդդողդ, միշտ աներկիւդ առաջ առնել այդ համոզմունքների դրօշակը։

Անհասը հերսոն է, երբ կարողանում է իր տաղանդի, իր առկունութեան չնորդիւ բարձրանուլ ընթացիկ կեանքի մակերեսոյթից և անձնազոն ջանքերով հարթել գաղափարական հոսանքի ուղին, երբ իր մտքերով, համոզմունքներով ու գործունէութեամբ իր շուրջն է գրաւում ամբողջ խմբեր ու հասարակական խուեր։

Մենք տեսնում ենք այնպիսի անհատ-հերոսների պատմութեան ամիսով ընթացքում, բայց նրանք տեսնձնապիս աչքի են ընկնում ճնշւած, կեղեքուած ազգերի կեանքում, երբ այդ կեանքը բունութեան շղթաների միջից բաց է անում ազատութեան ճնշապարհը, երբ ծանուում է յեղափոխութեան կարմիր դրօշակը։

Ահա մի կարտգեօրգիեվիչ, որ ապաստիք սերբերի գլուխն անցած արխանա ջանքերով կարողանում է տա-

պալել այնքան ծանր, այնքան ճնշող թիւրքական լուծը
և նոր կեանք տալ ազտա սերբիայի:

Ահա մի Խպաֆլանտի, որ իր դինակից խմբով թիւր-
քական սահմանն անցնելով բանութեան այդ աշխարհում
բարձր հնչեցնում է յոյն ժողովրդի ականջին.

«Ազատութիւն կամ մահ» . . .

Եւ նրա այդ կոչ արձագանք է գանում հազարա-
ւոր սրբում. նրա անձնազոհութեանը նորանոր խմբեր
է քաշում իր յետելից և բաց անում նոր Յունաստանի
ազատութեան դռները . . .

Ահա մի Մածինի, Գարիբալդի, որ իրենց գործու-
նչութեամբ այնքան ազդու զարկ են տալիս գեղեցիկ
իտալիայի ազատութեանն ու միութեանը :

Ահա վերջապէս մ՞ր Կարաւելով, Ստեփան Կարաջա,
Հաջի Դիմիտր և ուրիշները, որ իրենց կեանքն են զո-
հել սրբնութ հայրենիքի, Բալլարիայի ազատազրութեան
գործին :

Եւ դրանք բոլորը, բոլորը հերոսներ են՝ ազատու-
թեան մեծ գործի հերոսներ . . .

Իսկ հայր, որ սերբիայից, յոյներից ու բոլղարիներից
ոչ պակաս ճնշւած, կեղեքւած էր բանութեան հարևած-
ների տակ, զարեր չարունակ լուիկ-միջիկ համբերելուց,
արին արցունք թափելուց յետոյ նա ևս կանոնեց յեղա-
փոխական կարմիր ճանապարհին և այդտեղ տուած անցան
նրա համոզւած դաղափառական էնտիք զաւակները. ան-
ցան՝ հայութեան արդար բոլորը բարձր հնչեցներու, բը-
նութեան ու բարբարութեան դէմ խիզափառար կար-
միլու համար :

Հայկական նոր կեանքի, նոր հասանքի հերոսներն
էին՝ դրանք, որ իրենց յետելից քաշում էին ամբողջ խրմ-
թեր: Ճնշւած ժողովրդի ազատութեան սահմիրաներ էին

դրանք, որ ամբողջ աշխարհի առաջ հնչեցնում էին հայ-
կական արդար բոլորի ձայնը, որ միշտ և ամեն տեղ
արծարծում էին սեփական ոյժերով գործելու կարևո-
րութիւնը :

Եւ նրանցից շատերն լնկան ազատութեան մոծ ճա-
ռապարհին, ընկան դեռ իրենց կէտ նպատակին ըլ հասած :

Ահա այդ ընկած հերոսներից է և Քրիստովորը —
այն մարդը, որը իր ջինջ հոգիով, խորին համոզմունքնե-
րով, անձնազոհութեամբ ու անկեղծութեամբ սիրելի էր
ընկերների շշանում, յարգելի էր հասարակութեան ամե-
նալայն խաւերւում և աղղեցիկ էր իր փայփայած գործի
ասպարէզում:

Նա գաղափարի մի մագնիս էր, որ դէպ իրեն էր
քաշում նորանոր ոյժեր, քաշում որպէսզի նրանց էլ ցոյց
տայ յեղափախական կարմիր ճանապարհը, նրանց էլ կանգ-
նեցնէ գաղափարական վեհ դրօչակի տակ . . .

Նրա խօսքը մի աղջու զեղ էր վշտացած սրբերն
ամոռելու, յուղւած մտքերը խաղաղացնելու համար :

Նրա խորհուրդները, բացարութիւնները մէկ-մէկ
օղակներ էին, որ շաղկապում էին նոր ընկերների, ծա-
նօթների մտքերը և դրանցից սուեզում համոզւած գոր-
ծիչներ :

Նա իր կեանքի նպատակն էր դարձրել ճնշւածների,
հալածւածների արդար դատոր :

Եւ այդ նպատակը քաշեց նրան հեռու երկիրները,
«օտար հորիզոնների» տակ, ուր նոյն գործն էր նրան
դիշեր-ցերեկ զրալեցնողը՝ նահատակուող հայ ժողովուրդի
ազատութեան գործը :

Եւ իրեւ քաջ զինուոր այդ գաղափարի՝ նա ընկաւ իր
գուրգուրած մեծ ծրագրի իրագործման կէս ճանապար-
հին, ընկաւ վաղաժամ, իրեւ մի զոհ դաժան պատա-
հարի:

Ահա թէ ով էր Քիբատափորը, ահա թէ ի՞նչպիսի
մահւան տարելաբն է լրացել այսօր :

Ըսկաւ, մեռաւ Քիբատափորը . . . Ո՛չ . դա ճիշտ չէ .
այդպիսի անունները չեն մեռնում, նրանց ամբողջ էու-
թիւնը մի մարմնացած գաղափար է, իսկ ազատութեան
գաղափարը յարատե է, միշտ կենդանի . . .

Սյո՛ . անմոռանալի է Քիբատափորը . և նրա անունը
մի պատւաւոր տեղ կը դրաւէ հայկական նորագոյն պատ-
մութեան էջերում . . .

Նրա փայփայած գրօշակը դեռ ծածանում է Դաշ-
նակցութեան ձեռքին :

Նրա ոգին դեռ սաւառնում է ազատութեան լայն
ճանապարհին և քաշում, առաջ մզում գաղափարի զնու-
որներին :

Եւ այդ զինւորները կանցնեն ու կընկնեն նոյն ճա-
նապարհին, մինչև որ գաղափարը յաղթանակէ և վերջ
դնէ հայի գարաւոր վշաբն, տառապանքին :

Իսկ ով սիրում է Քիբատափորին, ով յարգում է նրա
մշատակը — նա պինդ պէտք է պահէ նրա բարձրացած
գրօշակը, լայն պէտք է բաց անէ նրա ընդգծած ճանա-
պարհը և խացնէ գաղափարակիցների շարքերը, որպէս
զի օր առաջ իրականաց ճնշւածների աղատութիւնը և
թագաւորէ արդարութեան սկզբունքը :

Այդ է պահանջում հայկական արիւնոտ իրակա-
նութիւնը . այդու կը լինի տմենամեծ յարգանքը անմոռա-
նալի Քիբատափորի յիշատակին :

Ե. ԹՈՓՁԵԱՆ

«Յատազ», 1906, թիւ 46

•••••

ԸՆԿԵՐ ՔՐԻՍՏԱՓՈՐԸ

«Եթէ մայր բնութիւնը ժամանակ առ ժամանակ աշ-
խարհ չուզագիշը այդպիսի մարդիկ, կը չորանար կեանքի
անդատանը», — գրում էր Նեկրասովը Գորբոլիւբօվի
մահւան սուիթով :

Մուս բանատեղծի այդ խօսքերն յիշեցի, երբ մի տա-
րի առաջ հեռագիրը գումար Քիբատափորի մահը :

Հազւագիւտ հազ գործիչ էր իշնում կեանքի բեմից, —
հմայիչ, ինչպէս ոչ ոք նոյն սերունդին պատկանողներից,
աղնիւ, տոկուն և նրազգաց, ինչպէս քչերը նրանցից,
և աղարութատ⁽¹⁸⁾, ինչպէս ոչ մէկը հայերից, գոնէ իմ
տեսածներից :

Քան տարւայ ընկերներ ենք եղել և ասկայն ես չեմ
յիշում եսականութեան գէթ մի դէպք Քիբատափորի կող-
մից : Ենդհակառակը, չեմ յիշում մի օր, երբ նա զրադ-
ւած չը լինէր սրան կամ նրան որևէ ծառայութիւն մա-
տուցանելով, երբեմն նայն իսկ՝ բառի բուն նշանակու-
թեամբ՝ հագի շապիկը ուրիշին տալով : Այդ էր պատճա-
ռը, որ ընկերական նեզ շը մը անում «ընկերամոլ» էինք ան-
ւանում նրան: և այդ էր պատճառներից մէկը, որ միշտ
«ուխափ գուռ» էր Քիբատափորի սկսեակը :

Ընկերամոլը չէր կարող ընկերավարական չը լինէլ,
և Քիբատափորը ընկերավարական էր և ընկերավարական
մնաց մինչև կեանքի վերջը : Յամենայն դէպս, նա ըն-
կերավարական էր 1885 թից, երբ ես առաջին անգամ
պատահեցի նրան Մօսկվայում:

Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտն աւարտած Մօս-
կվաւ էր եկել և աղաս ունկնդիր գրւել Պետրովսկայա

Ակադէմիայում, ուր լսում էր գլխաւորապէս քաղաքաւորնեսութիւն, որ ուսումնակրում էր հաղւագիւտ և ուսումնով: Օրը տասնովեց ժամ էր սպառապատմ և այդ ժամանակի մեջ մասը գործ էր գնում Մարքսը ուսումնաւորելու համար, որի երկրագուռներից էր, թէև մարքսիստ չէր՝ այդ բասի նեղ նշանակութեամբ: Ասենք, Մարքսն էլ ասում էր, թէ ինքը մարքսիստ չէ բասի այդ նշանակութեամբ:

Այդ ժամանակ Քրիստովուր կօսմօպօլիս⁽¹⁹⁾ էր և պնդում էր թէ ինքն այսպիսի ծրագրի է հետևում, որ կարելի է դորձալլուել նոյն խոր դժոխվում:

Սիսուհետեւ երբ Թիֆլիս վերադարձաւ, իրական կեանքն աղջեց նրա վրայ և այդ աղջեցութեան տակ՝ նա, չը դադարելով ընկերավարական լինելուց, զարձաւ ազգային սկզբունքի պաշտպան և ուրիշ իր համախոների հետ այդ ազգային ընկերավարական աշխարհայեացքի կոփքը դրեց այն կազմակերպութեան վրայ, որի հիմնադիրներից ու պարծանքներից մէկը եղաւ:

Տեղը և ժամանակը չէ մանրամասն բնորոշելու Քրիստովորի հմայիչ անձնաւորութիւնը և նրա կատարած խոչշոր դերը մօր պատմութեան վերջին տասն և հինգ տարւայ ընթացքում:

Սյաօր մէնք մէայն մեր յարդանքն ենք մասուցաւնում նրա յիշատակին:

Խնարհնեցնենք զլուխներս այն մարդու յիշատակի առաջ, որ գաղափարի համար ապրեց և գաղափարի համար մնուաւ:

ՏՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

«Յառաջ», 1906, թիւ 46



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

(Քրիստովորի մահւան առաջին տարեդարձին առքիւ)

Մի տարի անցաւ այն կոկծալի, այն ողբերգական օրից, երբ կոյր, ճակատավրական դիպուածը խլեց մի հոյակապ կեանք, որի մասուն է Քրիստովոր:

Դա մի բոլի չէր, այլ շանթառատ կայծակ, որ անցաւ մեր զլուխների վրայով և երբ լուց նրա որտար, մնաք նոր դգացինք աւերածի բոլոր չափի, կորստի ըուլոր մեծութիւնը:

Յանդուգն ծրագրների, աղնիւ մեծ խռներու մի ամբողջ աշխարհն էր, որ վիչում էր այդ զարմանալի կեանքի հետ, որ խորհրդաւոր ստուերի պէս այնքան տուրիներ թափառում էր երկրից՝ երկիր, քաղաքից՝ քաղաք, ամեն անդ ման տծերով իր ապացուցիչ անհատակունութեան, իր գերող անհանուրութեան հմայքը:

Եւ մնաք չէինք միայն, նրա մօտիկ ընկերները մեծ հոգու, մեծ յայտերի անմըջական հաղորդակիցները, որ շամեցինք այդ անակլնկալ հարւածից: Հայ հասարակութիւնն իր լաւագոյն ամբողջութեամբ, բոլոր նրանք՝ որոնց սրտերն ընդունուի են յուղելու զոհերի մեծութեան առաջ, անկախ իրենց քաղաքական գոււմաններից, բոլոր նրանք, որոնց զէթ մի անդում վիճակւել էր տեսնել անզուգական Քրիստովորին, նրա կեանքի եռուն, լիքը վայրկեաններում, զգացին նրա մահւան բոցած կիզիչ գատարկութիւնը:

Հեռաւոր, տարագիր գերեզմանը դարձաւ հաղարհաների համար պաշտամունքի առարկայ, և այդ միշտ

թագնւած, այդ տաճջւած մեծութիւնը հեռաւոր հորիզոնների վրայ բարձրացաւ իր բոլոր վեհութեամբ:

Եւ այս մեր գժնդակ, այս անիրաւ օրերում, երբ սանձարձակ ու վայրագ բարբարոսութիւնը բանութեան հետ ձեռք ձեռքի տւած արիւնոտում է հայի քաղաքակրթական ազատական իշխանները, Քրիստովարի գունատ ու տաճջւած պատկերը մեր աչքի առաջն է, նրա ուժեղ կամքը և ուժեղ խօսքը մեր առաջնորդը:

Տարագիր գերեզմանը, որքան և հետու լինի, թէկուզ մի ուրիշ ասալի վրայ, ազնիւ ներշնչումների, գեղեցիկ խենթութիւնների, մի անհատնաւմ ազբիւր է բոլոր նրանց համար, որնց թիկունքը ճկուն և գլուխն այնքան կուտացած չէ կրելու համար բանութիւններէ անիրարոյականացնող, ստորացուցիչ լուծը:

Յուսացող ժողովրդի պայքարի և յաւի այս օրերում տարագրի մեծ իդէալը մնում է որպէս առաջնորդող ասալ: Եւ երբ կը համնի ազատութեան և ձշմարսութեան յաղթանակը, երբ գարաւոր ճիգերը կը կնքեն մեր ազգի մարտիրոսութիւնը լուսաւոր ու մեծ ապագայում, այն ժամանակ նա դարձեալ կը մնայ՝ ազատութեան այն հըպարտ մարտիկը ազատ սերունդների համար որպէս յաւիտենական առաջնորդ գէպի նոր և աւելի ըմբռատ թեւակրիստները:

Յարգանք մեծ տարագրի գերեզմանին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ»Ի

1906, թիւ 41



ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԱՌՁԵՒ

Մահ ոչ խմացեալ մահ է,
Մահ խմացեալ արդարութիւն է:
Եղինէ

Ինչպէս Կարսի պայթիւնը, երկու տարի առաջ, այսօր ալ Սօֆիայինը դառն ու ճնշող տպաւորութեան տակ կը ձգէ մնզի:

Նախանձելի են անոնք, որ անկողնի մէջ չդիմողաւեցին մահը, կեանքի ատափակութեան մէջ — բայց սիրադ կը ճմրտկի, երբ գիտես՝ վատան ևս՝ ապացոյցն ունիս՝ թէ ո՛րքան սուզ կրնային ծախել իրենց կեանքը՝ այդ խիզախն ու ներոսական ընկերները, մօտիկ օր մը, ներոսական մեծ կուին մէջ . . . :

Ճակատադրի այն խորհրդաւոր զուգադիպութեամբ՝ որ Կարս զիտուեցաւ, այս անգում ալ Հայութեան երկու կուտղ գանգւածները իրենց ողբի մասը ունին Սօֆիայի կորուստին մէջ: Առողը ընդհանուր է, եգւարդ տաճկահայ յեղափոխականներու նոր սերունդին պատկանող ճարպիկ ու մտացի ուժ մը, ապագայի հերոս մը, կ'իյայ Դաշնակցութեան հնա զինուորի մը, անոր հմանալիրներէն մէկուն, Քրիստովոր Միքայէլեանի քովիկը . . . : Զէ՞ որ Ռուսիոյ և Թուրքիոյ եղբայրներուն ճակատագիրը լըծակից է հիմա:

Հապճեապով և կարճ տեղ մը բանելու սահմանաւծ այս երկատովին մէջ անկարմի պիտի ըլլայ ինծի ուրւագծել փորձել բարոյական այն մաքուր գէմքը Քրիստոփորին, որ անվիճելիորէն երիցագոյն եղբայրն էր երեցներու, Հայրիկը՝ նորերուն:

Այսօր երբ մահը՝ դաշնակցական գեղեցիկ ու վսեմ
աւանդութեամբ՝ թող կուտայ ինձի լնկեր մը հրա-
պարակաւ զրւատելու, անոր գերեզմանին վրայ
միայն ես կը զգամ թէ ինչ ուժ կորանցուցինք մենք
Քրիստափորի մահովը :

Քրիստափոր դաշնակցական բլալէ սուած հայ էր, և
հայ բլալէ առաջ մարդ էր — անա՛ այն մարդը որ հան-
րացին գործիչի մը խելալը կը ներկայացնէր, այն չափով,
որ ակար մահկանացուներուս արւած է մօտենալ այդ Սի-
նա լեռան, ուր խելալը կը թագնւի . . .

Եթէ կայ միմիթարութիւն մը ինձի համար այս դառն
պահուն, ոչ այն է որ միայն այդ աղետալի մահը նոր յա-
մառութիւն մը, նոր ուժ մը պիտի բերէ յեղափախական
շարքերուն — այսօր Յեղափախութիւնը չի կարօտիր այլ
ևս այդ զոհերուն, — այլ ապացոյց մընէ, թէ եւրոպական
ու ամերիկան արդի բարոյական ինկածութեան մէջ,
որքա՞ն փայլուն է այդ ժողովուրդին ապագան, որ տա-
կաւին մէկ ոտքը սարկութեան մէջ, լնդոնակ է Քրիս-
տափորի պէս գէմքեր սակեզելու :

Ա. ՎՈԱՄԵԱՆ

Հայրենիք, Պարօն, 1905, Թիւ 16



ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՂԸ

Չորս տարի սրանից առաջ, Յաղկանների հեռաւոր ու
ձիւնու լանջերում, ողբերգական պարագաների մէջ, յա-
ւերգութեան միացաւ նրա փոթորկու, վշտահար ու եւ-
րազական հոգին: Եւ այդ տիսուր ու ձականազրական
ժամից սկսած՝ նա գարձաւ պատմական անձնաւորութիւն:

Վերջին քամնամեալի հայկական կեսնքի ամճահե-
տաքրքրական, ամենազրաւիչ դէմքերից մէկն էր նա,
որի անունը անխպելի կերպով կապւած է կովկասահայի
ու աւաճկահայի քաղաքական վերածնութեան հետ: 90-ական թւականների մարտական, ազատազրական հո-
սանքի խտացումն ու կիսարօնացումը այդ վախտ, նեար-
դու ու անհանգիստ մարդու մէջ պէտք է փնտրել:

Իր մի քանի անճնէր, աղնիս ու տաղանդաւոր ըն-
կերների հետ՝ Քրիստափոր ներկայանում է իրեւ վերջին
օղակը այն գեղեցիկ շղթայի, որի սկզբնական շրջանում
(40-ական թւականներին) հանգչում է վսեր Արտվեան,
երկրորդում (60-ական թւերին) մարտական ու կորովի
նալբանդեանը, երրորդում (80-ական թւերին) խրոխտ
ու յուզիչ Բաֆֆին: Պատմական այդ երեք շրջանների
զարգացումն ու գործնական կիրառումը, բաժին լնկաւ 90-ական թւականներին: Այդ է պատճառը,
որ վիրջին գարեշրջանի ամենահետաքրքրական ներկա-
յացուցիչները իրենց ընդունակութեան, չնորոք ու եւանդի
ամենախոշոր մասը գործնական ուղղութեամբ չահագոր-
ծեցին: Հոգիների մէջ մթերւած այն մնածաքանակ ոյժերը
այլ ևս գրողներ ու խորհրդածողներ չը սաեղծե-
ցին. Կրանք, այդ ոյժերը գործողների փոխարկեցին:

Այդ էր դարի հիմնական ու առաջնակարդ պահանջը :
Եւ հայկական հոգին ու միտքը այլևս սկսեցին ծառայել — ոչ այնքան զբականութեան ու փիլիսօփայութեան — որքան քաղաքականութեան ու հասարակակառանութեան :

Քր. Միքայէլեան՝ գործունէութեւ Նիրուղութեամբ ու ասպարէզով այդ անհրաժեշտութեան ու պատմական այդ զարգացման զաւակը հանդիսացաւ : Նրա հոգեկան, մտաւոր ու բարոյական բոլոր տարրերը գլխաւորապէս այդ միջավայրում արտայայտեցին . . . Եւ նա եղաւ գործի մարդը գերազանցապէս . . . Սակայն մարդկացին հոգին երբէք միակողմանի չէ : Զգացող, խորհող ու յուղող տարրերի կողքին միշտ ապրում է և գործող տարրը : Ինչպէս և գործող մարդը՝ անհրաժեշտօրէն ունենում է նաև մտածող-խորդածող մասը :

Եւ ահա, այդ կէտի վրայ միայն կամենում ենք կենտրոնացնել ընթերցողի ուշադրութիւնը՝ ենթադրելով, որ միւս կէտը — Քրիստովորի քաղաքական-հասարակական կեանքը — բառականաչափ ծանօթ է ընթերցող հասարակութեան :

Իբրև ընդհանուր դիտողութիւն՝ պիտի նախ և առաջ յայնենք, որ այդ միջավայրում Քրիստովոր չունեցաւ այն թափն ու բերմանառութիւնը, ինչ որ նա անդէս բերեց ազատազրական կենդանի գործունէութեան ընթացքում : Հրապարակախօսութիւնը մի մշտական, ամենօրեայ զբաղմունք չէր նրա համար, այլ մի հարկադրական, անհրաժեշտ միջոց, որով նա կամենում էր պաշտառնել իր այս կամ այն տեսակի գործունէութիւնը միքրեալ ու եռուն կեանքի մէջ :

Նա քիչ է գրել, ընդամենը գուցէ երկու հարիւր էջ .
սակայն այդ քիչը չափազանց կարեւոր ու չափազանց նշանակալից է : Այդ սակաւաթիւ էջերի վրայ նա կարու-

ըովացել է խտացնել, ամփոփել մի շատ որոշ, պարզ ու յատակ աշխարհանայեացք, պատմական-սօցիօլօգիական մի մտահայեցողութիւն, որ ուղղակի, անմիջական ճանապարհով, առանց տաստանունների և առանց վարանման գիմում է գէափի ինդրի էական պարզաբանութիւնը :

Ոճը սեղմ, կարուկ, երբեմն նաև չոր ու անփայլ սակայն կենդանի, եռանգուտ, խիստ ու ուժեղ :

Երկու հիմնական տարրեր տոն⁽²⁰⁾ են տալիս նրա հրապարակախօսական ապացուցութեան : Մէկը առարկայական (objecitif) կեանքի դիտողութիւններն ու փորձերը և միւսը՝ ենթակայական — (subjecitif) տրամաբանութիւնն ու բանականութիւնը : Մի կողմից նա դիտում է կեանքի բազմակողմանի երեւոյթները, որպէսզի փաստեր ու հիմնառումներ ժողովէ . միւս կողմից ըննութեան է ենթարկում այդ բոլորը իր բանականութեան մէջ և ուժեղ տրամաբանութեամբ՝ անդրբեկի և ամուր հետեւանքներ համադրում :

Եւ այս երկու չափազանց գնահատելի յատկութիւնների չնորդիւ նրա հրապարակախօսութիւնը, ոճը, գրրածքը գառնում են համոզիչ ու ամսութիւնների միունքն իրեն՝ ուկնդրելով շարունակ կեանքի ձայնին և բանականութեան աղաղակին : Ոյնչ և ոչ մի տեսանութիւն չէ անցնում նրա աշխարհանայեացքի մէջ՝ եթէ նա կեանքի հարազատ արտայայտութիւնը և բանականութեան յանձնարարածը չէ :

«ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱՐՍՆԱՌԹԻԿՆ»

Այս վերնագրի տակ Միքայէլեան 1900-1901 թւականներին հրատարակեց մի աշխատութիւն, որի մէջ չափազանց ուշադիր ուսումնասիրութեան ենթարկեց թիւրքանց կեանքում — վերջին քանակամակի ընթացքում կատարւած քաղաքական նշանաւոր իրողութիւնները. — բանի իսլամացում, գաղթ, սով, հալածանք, բնաջնջումի սիստեմափթ փորձեր, սուլթանների քաղաքական յանդուզն ծրագրիներ, և բրօպական միջամտութիւն, մարտական շարժումները, հայկական ընդվզումը, կոտորածներ, փախուստ:

Պատմական այս վերին աստիճանի հետաքրքրական և արիւնուս խնդիրներով Միքայէլեան զբաղւեց մի այնպիսի ժամանակ, երբ մարտաւոր և հասարակական հրապարակում տիրում էր մի ցաւագին լքումն ու յաւառաւութիւն. երբ առնեն կողմից, անդում ազատամիտ բանակի գերավագները մի անընդունելի ու տարօրինակ եւ անդուլ «քննադատում էին» հայ մարտական շարժման «սիստերը», երբ Ստառնի և Թիւրքաց Հայաստանի միւս բոլոր կոտորածները — կազմակերպւած սուլթանի բննաւոր ապարանքում, որու ծրագրով և քաղաքական շատ յայտնի նպատակներով — առանց փաստի և առանց սովացրցի համարւում էին իր անմիջական հետեւանք հայկական շարժման: Վայրիվերոյ և մակերեւոյթական գնահատումների այդ տարօրինակ ժխորի մէջ, սրատամիլիկ յետաշարժման (réaction) այդ դժողովակ վայրիվնին՝ Քրիստոնուր Միքայէլեան դուրս եկաւ իր պատմական և սոցիոլոգիական լուրջ պատրաստութեամբ, իրողութիւնների և փառերի անհրաժեշտ ու բաղադրական նշանաւոր կուռ և հաստատուն արամարտութիւնը, որի մարտական շարժումը պարզաբանում էր այս պատմական գործութիւնը:

Մական և մարտամիջող խառնուածքով — պարզաբանելու համար երեք հիմնական առաջադրութիւն՝ նախ, որ հայկական կատարածները հետեւանք չեն մարտական շարժման, եթի որ որդ՝ որ այդ շարժումը մի անհրաժեշտութիւն է, եթի որ որդ՝ որ առանց այդ կարեւոր շարժման մեր ժողովուրդը Թիւրքիացում առմիջաւ վասնդի կ'ենթարկէր իր գոյութիւնը, մինչև ոչնչանալու, բնաջնջն լինելու աստիճան:

Ամենանսուրբ և գժւարին խնդիրը, զրւածքի ծանրութեան կենարօնը հետեւեալն էր: Պէտք էր ցոյց տալ, որ հայկական կոտորածների պատմականների շարքում տմնեւին տեղ չտնեն մարտական շարժումներն ու հայուազմինները. պէտք էր ապացուցանել: որ Թիւրքիացի կառավարութիւնը այդ շարժումներից տակաւան շատ առաջ հետեւում էր հայունիք քաղաքականութեան, պէտք էր հաստատել, որ հայկական կատորածները՝ այնքան սարսափելի և այնքան ողբերգական՝ մի հաւաածը, մի կըատըն էին կազմում պետութեան ընդհանուր, ափրական տրամադրութեան. մի արամադրութիւն, որ գոյութիւն ուներ անցեալից սկսած և որի համաձայն հայերը ովտի անհետանան թիւրքական աշխարհից բնչ գնոլ էլ լինի: Եւ այս կարեւոր կէտը ապացուցանելու համար նա հանդէս է ընթառ չափականց բարեխիլճ ուսումնափրութիւն՝ հիմնած օսմաննեան պատմութեան, իրողութիւնների մանրագննին հետազօտութեան և Եւրօպայի նշանաւոր գիտնականների, պատմաբանների ու սօցիօլոգների վկայութիւնների վրայ: Դրանք բոլորը միաբերան հաստատում են, որ Թիւրքիացում հայերի դրսութիւնը մարտական շարժումներից առաջ տմնեւին լաւ չէ եղել, դրանք բոլորը ընդգծում են և շեշտում այն հիմնական, հանրածանօթ ու անհերքելի համարականը, որ Թիւրքական աշխարհում հայ սաղմիկների գործունէութիւնից տակաւին շատ

տարիներ առաջ պատրաստում էր, գործադրուում, կիրառուում սոսկալի ու զժոխային մը ծրագիր հայ անմեղ, անզէն և անապահով ազգաբնակութեան վրայ: Այս է ցոյց տալիս պատմութիւնը, այս են ցոյց տալիս բազմաթիւ փաստերը, այս են հասանառում նաև օտար հեղինակների ծանրագչու վիկացութիւնները:

Եւ եթէ այդ ճշմարտութիւն է, ապա ուրեմն անմիտ, անբարեխիղձ, վասակար վարմունք է կապել հայ մարտիկների գործունէութիւնը հայկական կոտորածների հետ պատճառի և հետեւանքի շիթացակցութեամբ:

Սաղրդւելի իրազութիւնն այն է, որ գրանք բնուչն յարաբերում միմնաց իբր պատճառ և հետեւանք:

Այս հիմնական ապացույցութիւնց յևաոց՝ Միքայէլեան կանգ է առնում հերքելու նուն, որ հայ մարտիկների գոյութիւնը մինչև խակ չէ կարելի թէկուղ իբր պատըրւակ, տուիթ ընդունել հայկական կոտորածներին:

Որովհետեւ, երբ կեանքի մէջ, քաղաքական-պետական-հասարակական-տնտեսական լոյն միջամայրուում կան հիմնառոր ու տուարկայուկան պատճառներ, երբ մի անգում արդէն պարզւած է, որ սուլթանների պատմական, տանգական քաղաքականութիւնը ճգնում է մառցնել հայ ժողովրդին թէ քաղաքականապէս, թէ անսեսապէս, թէ կրօնապէս — երբ կայ, երբ գոյութիւն ունի տաճկական մթնոլորտում զանազան անցքերի ազդեցութեան տակ ստեղծագործուում և զանազան պատճառների անդիմադրելի մզումով ճնշուծ այդ հայուններ քաղաքականութիւնը — ինչ էլ որ լինի, թէկուղ ամենասփռքիկ, ամենաաննշտմն մի խղբառում հայկական հաղի վրայ, կարող էր իբր պատրաւկ, առիթ ծառացել ողբերգական կոտորածների և արիւնունու սարսափների: Դեռ ստեղին, երբ կայ, երբ գոյութիւն ունի հիմնական պատճառի պարագաների և տ-

ուիթներ ինքնապատճեան կը ծնւին ամենաաննծ դիւրութեամբ, և եթէ որ և է կերպ չը ծնւին անզամ այդ պատրաւակները հայկական միջավայրուում — մեր վիճակի տնօրէններն ու մեր կանքի տերերը կը ստեղծեն այդպիսի առիթներ: Այդպէս է եղել մըշտ և ամենուրեք, այդպէս է նաև հայերիս համար:

Ցոյց տալով, որ անձնուէր երիտասարդների գործունէունը, մարտական տարբողջ շարժումը աեղ չունի հայկական կոտորածների պատճառների և թէկուղ պատրաւակների շարքում Քրիստովոր Միքայէլեան անցնում է ացք շարժման գոյութիւնը քննութեան ենթարկելու:

Ու անեղջապէս յայտնի է գոտնուում, որ հայերի կողմէց արտացյատած դիմադրութիւնը, հայ մարտիկների սկսած պայքարը ոչ միայն հարկաւոր էր, այլ և անհրաժեշտ ու անխստափ էլի: Մինչև այն տատիճան, որ ուրիշ որ և է պարագայ, որ և է երկոյթ չէր կարող պատնէշ անկել այդ անհրաժեշտութեան ու անխուսափելիութեան առջեւ: Պատմական մի շարք անցուղարձեր, քաղաքական-տնտեսական մի շարք մտահոգութիւններ ըրբաւ, իրար գէմ էլին կամողնել հայ ժողովրդին ու թիւրք կառավարութեանը: Հասարակական այդ երկու ոյժերը այլ ևս իրար բացառու, փոխալ արձարար ժիստական րբույժն էլին առաջեւ: Հայ ժողովուրդը — այնպէս, ինչպէս նա կար — չէր կարող ապրել թիւրք կառավարութեան հետ, այնպէս ինչպէս վերջինս կար: Ու գրանց բաղխումը մի ացնափախ տիեզերական անդրաժեշտառութիւնն էր ներկայացնուում, ինչպէս բնուկան հակաղի ոյժերի ընդհարուումը: Հողի ստորին չերտերում մթնուած մթնաքանակ ոյժը՝ անկարող դիմանալ իր ներ ըջնուակուում հզօր շառաջով դուրս է ժամփքուում մի գեղեցիկ օր:

Բնական կեանքուում կան վարդիեաններ, երբ գործող

ոյժերի համբնթացութիւնը այլ ևս անկարելի է, երբ խաղաղ ու անաղմուկ հոսանքը այլ ևս անհնարին, և երբ միակ ճանապարհը — կատաստրօֆներն²¹⁾ ու զարհուրելի աղէմներն են: Հասարակական կեռուքում այդ օրէնքը գուցէ աւելի ուժգնութեամբ ու խորունկ թափով է գործում՝ չնորդիւ հասարակական տարրերի, ժողովուրդների ու անհամների գիտակցական միջամտութեան: Այսեղ էլ, ընկերական այս միջավայրում ևս կան բացասիկ վայրիկեաններ, երբ անհամները կամ ժողովուրդները դանուում են ընդհարւելու մի ծայրայեղ հարկագրութեան մէջ, երբ այլ ևս ոչինչ չէ կարողանուում յետաձգել կամ խախանել նրանց բաղխումը: Պատմական այդպիսի մի բացասիկ ժամանակում հայ ազգաբնակութիւնն ու թիւրք քաղաքականութիւնը իրար դէմ եղան: Հայերին մնում էր կամ ընկրկել ու տեղի տալ և կամ դիմագրաւել բռլանդակ էութեամբ իրենց գոյութեան թշնամի տարրին:

Ընկրկումն ու տեղատութիւնը անպայման և անվերտարձ կորուստ էր, դիմացի հոսանքը կը գար և իր վիթիսարի ու լայնածաւալ ալիքների տակ կը մահացնէր ամսն ինչ: Ու հայ ժաղավրդի լաւագոյն մասը տարւած իր զարկերակի բնական ուժով ու մլւած առողջ ընազդից՝ կանքնեց երկրորդ ճանապարհի վրայ, դիմագրաւելու, պայքարի, մարտի ուղին գարձաւ այդ երախտաւր մասի քայլերի ասպարէզը: Այս վերջին ճանապարհը — այսինքն դիմադրութիւնն ու կոխար անպայման կորուստ չէին: Եղին իսկ այսքան մասով նա մի առաւելութիւն էր՝ համեմ: ասած առաջին դրութեան հետ, որ անպայման անէացումն էր:

Բայց դեռ աւելին կայ: Երկրորդ ճանապարհով նըրանք չափազմաց զնահատելի հաւանականութիւններ ունէին իրենց գոյութիւնը ապահովելու մէջ:

Այսպէս, ուրեմն, մարտական ճանապարհը ոչ թէ մայն անհրաժեշտութիւն էր՝ բնական օրէնքների պէս անդամնալի ոյժ ներկայացնող, այլ և նա միակ օգտակար, միակ արդիւնաւէտ միջոցն էր՝ լուծելու համար այն սարսափելի ու անաւոր ընդհարումը, որ տեղի ունէր հայ ժողովրդի և թիւրք կառավարութեան միջև: Միանգամայն ուղղակի գծով, առանց վարանումների և առանց երկար տարութերումների՝ Միքայէլեան յանգում է այդ ընդհանուր եղրակացութեան, որ հիմնւած է միայն հայ կեանք քի ուսումնասիրութեան և տաճկական միջավայրում կատարւող իրական դէպքերի անմիջական հետազօտութեան վրայ:

Թրտաքին պարագաները, միւս կողմից, գալիս են աւելի ևս հիմնաւոր ելու և զարգացնելու այս ընդհանուր աշխարհանայինքը: Յումաննեան բռնապետութիւնը իր պատմական կեանքի ընթացքում բացի հայերից՝ յարաբերութիւնների է ունեցել նաև ուրիշ ժողովուրդների հետ: Յոյներո, բռւլզարները, սերբերը, աւելանցիք, Կրէտէն ընդհանուր առմասի գտնուել են նոյն պայմաններում թիւրք բռնակալութեան վերաբերմասը: Նոյնպիսի ընդհանուր չահերի նոյնանման հակադրութիւն, ոյժերի նոյն բաղխում — և այդ բոլորի հատեւանքը՝ թիւրք միավետութեան պարտութիւնը և նրա դէմ կանգած, նրան հակառակորդ ու թշնամի տարրերի — վերոյիշեալ ազգութիւնների ու երկիրների յաղթանակը...

Օսմաննեան պատմութեան մէջ տասնիններորդ դարի ամբողջ ընթացքում կատարւող այդ նշանակալից շարժումները, վորքիկ ժողովուրդների շարունակական պայքարը և նրանց սիստեմատիկ յաջողութիւնը ննիթագրել են տալիս, որ թիւրքիայի պետական-քաղաքական կազմակերպութիւնը բաւարար տոկունութիւն և եռանդ չէներկայացնում և որ, ուրեմն, հազերին ևս առենային:

հաւանականութեամբ կարող է վիճակւել նոյն յաղթանակը և նոյն ապագան :

Մատածողութեան այս եզանակը, որ յատուկ էր մեր մարտական շարժման նաև միւս առաջաւորներին՝ մի քանի հրապարակախօնների գրածքներում թիւր և մոլար բացարութիւնների տեղիք տւեց : Դրանք, այդ հրապարակախօնները երկու միալ գործեցին. նախ և առաջ հայկան աղատագրութեան հերոսներին վերտգրեցին միակողմանիութիւն, որից վերջիններս բարեբախտաբար առատ էին : Միքայէլեանի աշխարհանայեացը քննելիս, տեսանք, որ նրա մարտական տեսակէտը նախ և առաջ ոկզրնաւորւել է ներքին կեանքի պայմաններից և ստեղծւել հարագատառ հօղում : Այսինքն հայ ժողովրդի քաղաքներան և անտեսական կացութիւնը Թիւրքիայում այնպէս էր, որ նա չէր կարող կուտից բացի ուրիշ ձանապար և ընտրել : Նոյն այս տեսակէտը ընդհանուր է և ընդունելի մարտական գործունէութեան բոլոր կողմանիցների համար : Յոյների, բուղարների, սերբերի օրինակի վրայ մի նոր աշխարհանայեացք չէ կառուցւում, չէ հիմնարկւում, ոյլ եղածը դարգացնուում է, լայնացնուում ու բաղմակողմանի դարձնուում . . .

Միւս կողմից, հայկական շարժման մասին գրող «քննադատ-հրապարակախօնները» միալւում են՝ կամնակալով ոչ մի նշանակութիւն չը յատկացնել Բալկանեան թերակղզու աղգերի օրինակին : Սրհամարհել այդ — նըշանակում է արհամարհել պատմական մեթօդը, որ տակաւին շատ դեր ունի կատարելու հասարակական դիտութիւնների միջավայրում : Բալկանների և Թիւրքաց Հայաստանի աշխարհագրական դիրքերի, կլիմաների, մինուրանների առընթերութիւնը ամեննեւին չէ ապացուցանում, որ այդ երկու երկների պատմական ընդ-

հանուլը ընթացքը տաճիկ բանապետութեան վերաբերմամբ է ապէս միւնչնոյնը չէ : Բնութեան մէջ ոչ մի վայր՝ նման չէ միւլոն բացարձակ մաքով . ոչ մի վայրկեան տիեզերքի յաջորդականութեան մէջ նոյնութեամբ չէ կրկնուում երբեք : Եւ սակայն այդ անխուսափելի պարագաների միջնական կամ արագ բացի յանգարում է իմնական երեւոյթների կրկնութիւնը մի քանի միջավայրերում և մի մի քանի պատմական մօնինաններում :

Հասարակական և պատմական գիտութիւնների այժման անկատար վիճակում ամեննեւին նարաւոր չէ ապագայի նկատմամբ որ և է կարծիք յայտնել : Հիմնածած այդ գիտութիւնների օրէնքների վրայ : Զանազան ժամանակների և զանազան վայրերի մէջ կատարուած իրողութիւնները տակաւին մնում են ամենամեծ ուղեցոյցը՝ այդ կարգի մժին, բարդ ու կմծուած խնդիրներից որ և է կերպ գլուխ հանելու : Քորր շրջանների սօցիօգններն ու պատմաբանները ահազին նշանակութիւն են յատկացրել այդ մեթօդին : Տամնիններորդ դարի նըշանաւոր վիլխասովայ-հասարակագէտները պրօեւտարիատի ապագայ յաղթմանակի մասին խօսել են՝ հիմնածած արրկութեան և ձորաւութեան յաղթմանակների վրայ : Յաղթմանակները, որոնք կատարել են ուրիշ ժամանակում և ուրիշ միջավայրում : Այն խաչոր ասրբերութիւնները, ուրեմն, որոնք գոյութիւն ունեն պատմական այդ երեք շրջանների միջև — չին, միջն և նոր դարեր — և այն աչքի ընկնող զանազանակերպութիւնը, որ անչուշտ կայ սորկատերերի, սուատական իշխանների և կապիտալիստ բռոքուանների միջև՝ ամեննեւին չին կարող վճռական նշանակութիւն ունենալ երեսոյթի հիմնական և է աւկան նմանութեան հանդէպ :

Այսպէս, Թիւրքական Միքայէլեան գործադրել է — և երքին կեանքի իրաւում ու ուսումնական առաջարկութեան համապատասխան հանդէպ :

սիրութիւնից և ուշադիր հետազօտութիւնից յետազօտութիւնից միտքին — մի այնպիսի մեթօդ, որ կիրառւում է հասարակական և պատմական գիտութիւնների մէջ :

Այնպէս որ՝ եթէ մինչև լսկ հնարաւոր լինի Բալկանների օրինակը հիմովին և բացարձակապէս մերժել էական պլորէմը, մարդական շարժման, պայքարի ու դիմադրութեան անհրաժեշտութիւնը որ և է կերպ չէ կարող խախտել : Նա միշտ կը մնայ իրեւ մի հզօր հրամայական, որ միայն կարող է լուծել հայ ժողովրդի և թիւրք կառավարութեան պատմական ճակասուագրական ընդհարումը : -----

ԲԵՐՈՒԽԻ



ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐԻՑՍ

Զը գիտեմ, երբ և իցէ մը գրող, մի պատմագիր, մի կենսագիր պիտի կարողանա՞յ լրացնել ամբողջական պատկերը, ներկայացնել նկարագիրը — էութիւնը Քրիստովորի, անհաման Քրիստովորի :

Ես տարակուսում եմ : Տարակուսում եմ մանաւանդ նրա համար՝ որ այսօր իսկ, կենդանի վկաներից, կենակիցներից, նոյն իսկ իւր էութեան մի մը մտար ներկայացնողներից շատերը, մանաւանդ Մինը իրան բաւական չը համարեց այդ անելու :

Նրանցից ամէն մէկի առանձինն զրի առած յիշողութեանց ամբողջութիւնը՝ նուիրւած նրա Յիշասակին, որպէս թէ պիտի գան լրացնել մին միւսը, և հնարաւորութեան չափով ծանօթացնել նրան անձանօթներին, ո՛չ միայն Հայ ժողովուրդին՝ այլ և բոլոր այլացեղներին, որովհետեւ ո՛չ միայն Հայ Քրիստովորի գաղափարներն ու էութիւնը միմիայն Հայութեան յատկացուած էզնիզմը⁽²⁾ չէ, այլ նաև իրաւունք ունի լինել ալտրիւֆզի⁽³⁾ ափապար ու ներշնչող բոլոր տառապող Ազգերին, սերունդներին, ինչպէս մեզ համար եղել են և պիտի լինին Հին և Նոր դարերի նոյնանման դէմքերը :

Ահա՝ այսպիսի գժւար ու պատասխանատու պարտականութիւն կատարելու համար ես էլ իրաւունքը, աւելի ճիշաը, յանդգնութիւնը կարո՞ղ եմ ունենալ :

Այս հարցը ես ինձ տուեցի ամէն անգամ՝ երբ Նրա աշակերտառաքեալը, աւելին՝ նրա գործակիցը, ևս աւելին՝ միւս կէսը եղաղներից Մինը ինձ յեշեցնում էր, . . . , գրեցի՞ր :

Ե՞ս ունենամ այդ յանդգնութիւնը՝ որ դրանց տուաքեալների աշակերտն իսկ համարուելու ո՛չ մը բանով իրաւունքը չիմ վայելում։

Ե՞ս ունենամ այդ յանդգնութիւնը՝ երբ դժուեմ, թէ գոյներ, տեսարաններ, պատկերնել, էակներ կամ՝ որոնց նկարագրել, նկարել, պատկերացնել լիովին չի կարող ամնանառը, ամենածարագր վարպետի գրիչն ու վրձինը։

Միթէ կարելի է հոգին, ողին պատկերացնել։ Զէ որ նա մրայն զգացւում է։

Ես միայն մը պարուք պիտի կատարեմ, ուրեմն, — աւանդել իմ անզօր գրչին իմ տեսանձների ու զգացածների գէթ ակնթարթական յիշողութիւները։

—

1897ի սկիզբն է։ Մեծ քաղաք մտած օրուանս իսկ երեխյեան պատահականութեամբ գտնում է ինձ Սուրէնը։ Ինքը սովորութիւն չունի յաճախ գործածելու իւր երբեմն սարորագրած այս կեղծ անունը, որով քէրին է յարանի, բայց ընկերական շըմանից բոլորն էլ կարող են մակարերել։ Դա առաջին գէմքն էր գաղափարականի՝ որի առաջ ես բաղդն եմ ունեցել հիացման ու պատկառանքի բաւկանութիւնը վայելել ու դրանով ես ինձ կրթել։

Սուրէնը տարեց ինձ անմիջապէս ընկերների մօտ։ Հ. Յ. Գաշնակցութեան Բ. Էնդհամուր ժողովն էր։

1895-96ի արհաւելքներից յետոյ, մարտիկները, գործիչները և հետևորդները եկել էին ամէն կողմից։ Գոյիցինեան բէժիմը նոր էր սկսում, բայց և այսպէս մըշտ էլ հնարաւորութիւնը գտնում էին, գտան հաւաքուելու, խորհրդակցելու, վիճելու և որոշումներ կայտնելու։

Եկել էին շատերը։ Պահառաւմ էին միայն Բանկի կինդանի մնացողներն ու Ամբագրութեան՝ «Գրօշակ»ի՝ Զարքաշները։

Նրանցից քէրն էին ինձ ծանօթ անձամբ։ Ես ո՛չ մի բանով ինձ իրաւունք և արժանի չէի համարում մասնակցելու։ Կովկասեան ընկերացին յարաբերութիւնը՝ որ հոգին իսկ է գաղափարականութեան և պէտք է յարչտ լինի, և որ այնտեղ շուտ էր փոխանցուել ուռասական եթերացին տեսականութիւնից, ինձ անծանօթ էր։ Ես կաղմուած էի պարտքի և իրաւունքի յարաբերական սահմանների։ Վրայ կանգնած դիացիլինի հասկացողութիւններով։

Երջապատուեցի, մզուեցի, բայց այդ Բ. Էնդհ. Ժողովի ամբողջ տեսականութեան ընթացքում ես չը համարձակուեցի անցնել իմ ըմբռնած կարգի սահմաններից։ Մասնակցամ էի միայն ցայն վայր սահմաններով ներշնչուածս ընդլայնել, աւելի ճիշտը՝ գէթ հիացումի վայելքը ունենալ հաւաքական մարմնացումով։

Այդ անգամի էական հարցը կազմում էր Արշաւանքը։ Քրիստափորն էր երեւում այդ մոքի ծնողը և զբլաստոր պաշտպանը՝ Դումանը։

Բուռն վիճաբանութիւնները չէին շօշափում մի ակամիվ ձեռնարկի անհրաժեշտութիւնը։ Այդ մասին բոլորն էլ համամշտ էին։ Տարբերում էին միայն ծրագրման, տակտիկայի մասին։ Եւ վերջապէս Քրիստափորը յաղթաշամակել տուեց։

Ժողովը վերջացաւ։ Եկուորները ցրուեցին։ Ամէն մընը իրան վիճակուած կամ իւր ստանձնած աշխատանքի յետելոց զնաց։

Մնացին միայն հինգը։ Մինն էլ ձերբակալուեց։ Զորորդի գերը աւելի բանաւոր քան ակտիվ էր։ Երրորդը՝ աւելի շուտ յանձնարարակատար, ընդունակութիւններին ու փափուկ սեռին յատուկ չափով։

Մնում էին ուրեմն երկուառ՝ որոնց վրայ ծանրացած էր Բիւրօյական ամբողջ աշխատանքը, աւելի ճիշտը, զբլ-

խաւորապէս որոշուած Արշաւանքի իրադորձման համար անհրաժեշաներին հայթայթումն ու բաշխումը :

Այդ երկուսից մինն էլ, համարեա՛, գեռ նոր էր սովորել իւր ազգային լեզուն, նոր էր քիչ ու շատ վարժուել հայերէն խօսել: Ռուս-վրացական շրջանից նրան էլ բերել ամենագործնական աշխատանքի ընկերն էր դարձրել Քրիստոնիոր:

Եւ ես զարմանում էի, չ'ասեմ կասկածում էի, թէ ի՞նչպէս այդ երկուսը պիտի կարողանային այդքան մեծ գործ գլուխ բերել, թէ ի՞նչպէս գնացողներն էլ վասահացել ու գնացել էին:

Ինձ էլ աշխատանքի գրեց նա: Բայց օրն ի բուն իմ աշխատանքը կայանում էր կարինէտային, համարեաներքին յարաբերական գործերում սահմանափակուած: Բուն գործը նա էր տանում: Իւր ներկայութիւնը մեր կառարած խորհրդակցութիւններին կարծես ձեւական էր: Նա չէր էլ մասնակցաւ: Միշտ զբազուած էր: Ամէն դասակարգից, ամէն աեղից մարդկանց նա ընդունում էր: Ամէնին մի բան ունէր ասելու, հարհանգելու:

Կասսան դասարկ էր, մի դանդ անգամ չլ կար, բայց նա միշտ գտնում էր հարիւրներ, երբեմն հազարներ, օրը օրին գալիս, օրը օրին ծախսում էին: Գալիս էին ամէն կողմից ընտրաւած, ջոկուած հայրուիներ, որոնք ճանապարհուում էին գնալ աւելացնելու Արշաւանքի խմբերը, ամէն օր ճամբուում էին միերքներ ու այլ անհրաժեշտները:

Եւ ես ա՛յն ժամանակ միայն տեսայ, հասկացայ որ այդ մէկը արժէր հարիւրներ, հազարներ, և հարիւրներ ու հաւարներ նրա ձեռքով, ակնարկով լարուած գործում էին:

Մի անգամ միայն նեզն էր մնում փողի համար: Երեկոյեան տասոց, Ուկանապատ պիտի գնաս, ու ճանապարհեց: Նամակ էլ չը տուեց: Միայն մի հասցէ էր տուել: Գնացի, ներսէսին գասայ: Թուում էր՝ որ արդէն սպասե-

լիս է եղել ինձ: Երկրորդ օր մի սեղանի շարջ հաւաքուած էին հաշուապահներ, կառավարիչներ, բժիշկներ, խնձէնիւրներ, բոլորն էլ բուրժուած-ինտէլիգէնսներ, ու երեկոյեան վերադարձայ ծոցս հինգ հազարը զետեղած:

Ո՞չ մի հաճանգ չէր տուել ինձ: Բայց նա հարհանգում էր բոլորին ո՞չ թէ յատկապէս հրահանգելու ոճով և մի անգամից՝ այլ մի գանգատ, մի կարծիք, մի հեղանաք, մի սրաբանութիւն, մի գգումնիք յայտնած լինելու ձևով: Եւ ես ձմնապարհին այդ բոլորը վերցիւլով, շղթայելով, յարակցելով աշխատում էի գանիւլ թէ ի՞նչ պիտի անեմ . . . :

Պատրաստութիւնները վերջացել էին: Բանափից դուրս եկաւ և նրա միւս կէսերից Մինը: Կաղմակերպական ներքին և արտաքին աշխատանքը իւր նօրմալ ընթացքը ստացաւ: Նա յաճախ ներսումն էր, Միւսը ներսումը լինելով հանդերձ և յաճախ դրսումն էր, ամէն տեղ էր, մարդկացին մի վարագ՝ որ գնում էր շատ անգամ պատանիների, ուսանողների, հասարակ արհեստաւորների շրջանում հստուելու, որապէս, ո՞չ, ձիչտ չէ բառը, յախտակելու, նրանց վատերի, ցաւերի գիտակցութիւնը մտցնելով՝ բանակի թիւը ստուաբանելու:

Իսկ նա՛, նա՛ որ յաճախ ներսումն էր երեւում, չը գիտեմ, մինչեւ այսօր էլ չեմ կարող հաշիւ տալ՝ թէ ե՞րբ էր ժամանակ գտնում, գնում և բոլորին գտնում. բոլորին՝ որոնց ամէն մէկին մի բան ունէր ասելու, պատուիրելու և ատլու:

Այս՝ տալու, որովհետեւ նա անձերով, մասնաւորների կեանքով, կաղմակերպական շարքերից գուրա գանգուողներով էլ զբաղւում, հետաքրքրում էր: Գիտէր մէկի անձկութիւնը, միւսի կարօտութիւնը, մէկի հիւանդ լինելը, միւսի գործից զրկուելը, և նա գտնում էր իւր-

անկուտ, ծակ քսակից մի մի բան տալու, կարիքնին հոգալու, տառապանքնին մեղմացնելու, ու օրերը անցկացնել կարենալու չափ բան: Ի՞նչպէս, ո՞րտեղից. — ո՛չ ոք գիտէ:

Սխալուեցիք. Էն միւս մի Կէսը գիտէր: Սա մի օր բերեց կասային յանձնեց՝ որոշ չեմ լիշում՝ ութառն մի քանի բուրի գումար: Լսել էր որ իւր ամիսներով բանտի տառապանքի օրերում ծախտած էր իրա համար: Իր փոխառութիւն էր համարել և վերադարձրեց: Միտքը, աշխատանքը, հանգիստը, կարիէրը ՀԿ), կեանքը, քսակը տալիս էին, զո՞ւում էին ամէն բան: Աչքերս լեցւեցին. ես ինձանից ամաչեցի: Կովկասի երիտասարդութեան համար մի պաշտամունք ունէի, բայց այդ պաշտամունք մնձանում, սրտի ուսչումով բարձրանում էր բացառութիւնների շրջանում փաստերի, կրթող կեանքի առաջ:

Աշխատամնք: Հապա անձնականը. հացի տաղուստի հոգաք: Այդ էլ իրանք էին քաշում: Ամէն մինը ունէր, ձեռք էր բերել ապրուսի մի գուռ, մի պաշտօն: Դրանց էլ պիտի հանէին: Նա՝ Քրիստոֆորը «Նօվօէ Օբօզրէնիէ»-ում, հայողզի իշխան թուժանովների ուռւսերէն այդ օրաթերթի սրբազրիչն էր: Սպասում էին տպարանում, ոնք բաժանեցու էր հասցնել ձեռագիրները, փորձատիպները սրբազրուած: Ե՞րբ, ի՞նչպէս հանել . . . : Օրուայ 24 ժամերը 48 չեին լինում. . . :

Քանի, քանի անգամներ գնում էինք տուաւօտ աշխատանքի ու տառապանքի Մարտիրոսի պատկերը փըռուած տեսնելու թափիծով: Պատկեր ասացի: Չը գիտեմ ի՞նչ բառով որակեմ պատկերացնել տալու համար յողխած, խոնջած, փշուած մարմնը՝ որ անկողին անգամ մտնելու ժամանակ չունենալով, չորերը հագին, աչքերը նույի փուռած էր լինում դիվանի վրայ:

Մի առաւօտ նատալիոյի հետ ներս մտանք: Դարձե՛ալ նոյն պատկերը: Սիրտս խշխում էր: Զայն տալ ցանկացայ: ՄԵ՛ղք է, ասաց քովինս, թո՛ղ քնի: Ես էլ էի մորմոքւում, ընկերուհիս էլ բայց, նրա «մեղք է, թող քնի»ի մէջ զգացի իմ անձնական տառապամքիցս ազատուելու համար անզգալարար ձայն տալու, զարթեցնելու էզօիզմը, իսկ արդեւողի իւր անձնական մորմոքման մէջ տանջուածի քունը, հանգիստը չարունակել տալու արտուիզմը:

Եւ ես դարձեալ ինձանից ամաչեցի:

Այդ մորմոքման, հիացման, պաշտամունքի առարկայ պատկերը Քրիստոփորն էր: Նրա այդ վիճակի առնայաջող լուսանկարն, ամնանառը վարպետի վրձնիք արտադրութիւնն իսկ, հաւատացած եմ, չի կարող լսիլունել, պատկերացնել տալ իսկութիւնը: տպաւորութիւնը:

Անտիսական տիոցս բովանդակ երեակայութեամբս միայն մի՛ համամատութիւն եմ գտել: — կենդանի Քրիստոսն էր:

Միշտ ասում եւ կրկնում են նրա՝ Քրիստոփորի գունատ դէմքը: Գունաւու, երբէ՞ք Գունաւու, ամոդրիի, մարմարեայ գոյներ կարելի է նշմարել ո՛չդիկութէ այլ ընդնշմարւող նրբածածկ մարմնների վրայ՝ որոնք քարշում, կառչեցնում են իրանց վրայ արուի նայուածքը, զմայլում է մարդ, բայց գրգիռ, պաշտամունք չի զգում: Այդ է գունատը, ըստ իս:

Քրիստոփորինը այդ չէ: Նրա մաքուր, յասակ, ապիտակին մարմնի վրաց մի փայլ, մի լոյս և միեւնոյն ժամանակ թափանցկութիւն կար, որից անցնում էր մարդնրա հոգոյն մէջ, հիանում, պաշտում, խոնարհում էր:

Բոլոր ազգերի, բոլոր լիզուների մէջ պիտի ստեղծել մի բառ, որ կարենաց ըմբռնել տալ այդ գոյնը, այդ տպաւորութիւնը: Եթէ չը կայ արդէն բառը,

նշանակում է՝ արտայայտուելիք դաղավարը բացառութիւն է; Այդ բացառութիւնը մենք ունեցանք բնութիւնից օժտուած: Արտայայտել կարենալու չափ մեր ստեղծագործութեամբ կը բարձրանաք մինչև իրան:

Քրիստոսի համեմատութիւնը ունեցայ: Ինձ թւում է՝ որ Որդի-Մարգոյ-ի մեծութիւնը կայանում է ո՛չ այնքան նրա փիլիսոփայութեան, դէվիզների²⁵⁾ մէջ՝ որոնք իրանից առաջ, դարեր առաջ ուղիների խոհերն են եղաւ, այլ նրա կեանքի ու խօսքի կենդանի, ախար. ներդաշնակութեան, անձնական զոհաբերութեան, համակերպման կանացի տանջանաւորութեան մէջ:

Քրիստոսիորինը աւելին էր: Եւ նրա փիլիսոփայութեան, կուռզ կեանքի վերաբանութող զոհաբերութեանը մէջ:

—

Արշաւանքը ձգձգւում էր: Ներքին պատճառներ կային: Քրիստոսիորը ասաց. պիտի գնաս:

Ճանապարհուում էի: Դէպի կայարան, կառքում, խորասուզուած, մտատանջ թափիծի էի ենթարկուել: Կողքիս Սէրգէն էր նստած: Պահանջեց որ ասեմ այդ տրամադրութեանս պատճառը: Ո՛չ Քրիստոսիորին, ո՛չ Միւսին չէր կարող ասել, խոսապվանուել: Ես նրանց գերին էի: Բայց Սէրգէյին ասացի: Խոստովանուեցի իմ անհամապատասխան լինելը, պատասխանատութեանս մեծութիւնը, գրուած պարտականութեանս ծանրութիւնը: Ժպտաց: Երբ կայարան հասանք, Քրիստոսիորը գիտէր արդէն իմ ներքին յուղումը: Ոչինչ չասաց: Անսոցների տակից յանեց վրաս այն երկու սիրուն, դիւթիչ-կայծ նայուածքը և մի համբոյրով երթաս բարեն մրմիջեց: Այս, այն նայուածքն ու համբոյրը . . .: Մնացաւ լրացրեց Մինը միւս Կէսերից, L'Autre Moi-ն, շշէց-ը:

Վերադարձայ: Թիվիլիդում չէր Քրիստոսիորը: Նոյն օրն իսկ վաղ տուեցի մինչև Սուրամ: Գո՞հ էր մնացել արդեօք նա: Այդ էր ինձ անհրաժեշտ գիտենալ: Պատմեցի բոլո՞րը, բոլո՞րը ինչ որ կատարուել էր և ամենաւ գիտաւորը Սրչաւախումբը մեկնել էր, որից յետոյ միայն ես վերադարձի ուղին բռնել էր: Պարակաստանի սահմաններից գուրս չեկած տեղեկացել էի նաև Արշաւախումբի վերադարձը: Լսում էր, բայց նրա աչքերում չէր կարդում իմ հարցի պատասխանը:

Եւրոպան, արարատ աշխարհը անգիտակ էր մնացել՝ թէ ջարդուած, վերջացած համարուած հայ-յեղափոխութիւնը աւելի մեծ թափով մարափ գաշտն էր նետուած:

Բայց, նախ քան վերադարձս, նոյն իսկ նախ քան Արշաւախումբի մեկնելը, Եւրոպացի համակիրների հետ մենք ունեցել էինք պայմանադրութիւններ հեռագրական հաղորդագրութիւնների համար: Ո՛չ մի կողմից արձագանք չը կար, սակայն: Քրիստոսիորը այդ չէր ների ինձ, թէև ոչինչ չէր ասում: Մի քանի օրից յետոյ միայն ստուգեցինք որ գերմանական Վոլֆի գործակալութեան անցել էին Թիվիլիցի գծով հեռագրական հաղորդումները, բայց Վիհէլմի կառավարութիւնը այնտեղ էլիւր աղդեցութիւնը գործել էր հրատարակութիւնը արդեկելով:

—

1898-ի Երրորդ Ընդհանուր Ժողովը է:

Քրիստոսիորը ծրագրել, աւելի ճիշտը մտադրել էր Բիւրօն բաժանմել երկու քի, Ամբագրութիւնը ուժեղացնել Բիւրօյական տարրով, Եւրոպական հասարակաց կարծիքի համար Հանօթօների, Վիհէլմների գէմ հակաղիք միջոցներ ձեռք տանել, երկրում կերպնացումներ կատարել:

Յուցական թէ կերպնացման տակավկայ: Երկու կողմն էլ ուժեղ էին և յամառ: Վերջապէս Քրիստոփո-

ըինը՝ ցուցականը կեդրոնացման պայթումին հնմտակաց լինելու թէութեամբ՝ յաղթահարեց թէ մին և թէ միսի համընթաց տակտիկան :

Բայց մինչեւ այդ, մի անգամ վիճաբանութիւնը այնքա՞ն էր սպասնական կերպարանք ստացել՝ որ ոմանք յուղուած ասում էին՝ թէ Դաշնակցութիւնը բաժանուում է։ Շատերը հանդիսաւ, անվրդով էին, որովհետեւ բնազդապար զգում էին, որ եթէ պիտի բաժանուի, կը նշանակի գործի շահին համար անհրաժեշտ է գտնում Քրիստոփորը, թէ չ՝ նա չի թողնի։

Եւ չը թողեց, առելի եւ յօդեց։

Դժուարալուծելին պարտականութեանց բաշխումն էր։ Սարի լանջում, բաց օդի տակ, դարձնալին արեգակի ներքեւ էր նիստը։ Հարցը կեդրոնացման Մարմիի մասին էր։

Ուոչ չեմ միշում, ի՞նչ ասաց Քրիստոփորը։ Սաքօն, մշտաժիտ Սաքօն, ծիծաղը պատերին, ժպիտը շրթերին, վեր կացաւ, մէկը եւ՛, գնում եմ յայտարարեց ու ծափահարուեց։ Միւնքը իրանց թեկնածութիւնը դնում էին հեռագրներով։ Սաքօն ամենից առաջ գնաց։ Հարցը լուծուեց։

Իսկ Սրբամեան Բիւրօի, Խմբագրութեան մէջ անպատճառ ինք պէտք էր մասնակցել, այդպէս էր կամենում։ Եւ ո՛չ միայն պիտի մասնակցէր՝ այլև պիտի կազմակերպէր։ Այդպէս էլ եղաւ։ Ուրիշները, ականատես, գործակից վկաները նկարագրած ունին արդէն՝ թէ ի՞նչպէս նա տարեց, ստեղծեց, կազմակերպեց այդ գործը։

————

1901-ի սկիզբներն է։

Ս. Զ. ը. միշել է արդէն Կազմակերպութեան Կամը ըը ներկայացնող Մարմիի կողմից արուած որոշումը՝ որին

Նա միայնակ հակառակ լինելով հարդերձ համակերպութեան համարեա բոլորի ցանկութեան հակառակ ստիպմամբ անցաւ Գործադիր Մարմիի գլուխը։

Այդտեղ ճիշտ է նկարագրում Ս. Զ. ը. նրա այդանելու թելալրով հոգեբանութիւնը՝ որ Կազմակերպութեան մշտառեւ ուղեցոյցը, նրա մէջ անցնող ու երկարող կարմիր թեկն է եղել։

Բայց պիտի աւելացնել՝ թէ ինչպէս նա իրագործեց։

Մարտական շարժման գէմ ուէկալցիան իւր գաղաթնակէտին էր հասել, ամբոխային արամարանութեամբ տրամադրութիւնները վարուեկել էին նոյնիսկ կուսակցական շարքերը։ Մարտական ընկերներից շատերը մտել, անցել էին անձնական, նացի կոռուք շարքերը։ Համակրական օֆանդակութիւննին վաղուց արդէն դադարեցրել էին բուրժուական նախկին համակիրները։ Իմ գանուած միջավայրում, մես մենակ արածու գիմունները անարձագանք էին մնում նոյն իսկ այն ընկերների կողմից՝ որոնք յետագում ամենասխոցը, առաջապահի տեղերը բանեցին Կազմակերպութեան մէջ։

Կովկասի մէջ ուէկալցիական, ամբոխային արամարանական այդ զրութիւնը ինչքան էլ բնական հետեւանք լինէր պատմական յուսանատական օրերին, մասամբ և արդիւնք էր բայցակայութեան այն Ղեկավար Ռւժերին՝ որոնք փոխագրել էին իրանց անմիջական գործանէլութեան միջավայրը այլուր, և այդ բայցակայունները եղել էին գրլխաւորաբար իմ ակնարկած, յիշած յանափ միմնանց լրացնող Խրկուը։

Եկաւ նա իւր միախան կատարելու համար։ Նրա ներկայութիւնն իսկ բաւական եղաւ երեւոյթը՝ տիսուր իրականութիւնը հիմովին շրջելու։ Միսիայի իրագործման համար պաշտօնապէս ընարուածների մասնակցութիւնը համարեա անուանական մասց։ Նրա սուր, թափանցող,

գիւթող աչքերը գտան այնպիսի անձնութէրներ՝ որոնք հեկեկալով պնդում էին, թէ, եթէ Քրիստոսիորը իրանց չընարի ու չը մղի դէպի զո՞աբերութիւն, դէպի կառափնատ, իրանք անձնասպան կը լինեն:

Տօնուել էր արդէն կազմակերպութեան Տաճառամեակը՝ որ չեղաւ անկումի նախատօնը՝ ինչպէս Նա էր վախենում ուրիշների նոյնանման շրջանի օրինակից արասափած, այլ եղաւ վերակենդանութեան, ուռացման, համատիրութեան թուականը, երկրորդ տասնամեակի շրջանը:

Երբ Նա դարձեալ թողեց ու հեռացաւ Կովկասը, վերջնականապէս ապահով էր կազմակերպութեան ներկայից ու ապագայից: Երկրորդ անգամ ստեղծագործել էր Նա: Արձագանքուել էին և երկրի ընկերները, Հերոսները: Ամէն կողմ մարտի, շարժումն, զարթնումի շեփորն էր հնչում՝ որ անցնում էր իրեւ մի եկեկարականացած հոսանք ամէն տեղ՝ ուր գէթ մի հաս հայ կար, մի ելեկտրականացում՝ որ պիտի փշրէր Գովիցինան բէժմն ու ծրագրերն էլ:

—

1904 թուականն է:

Կովկասը բռնկուած է: Կալուածոց գրաւումը, Հայ ժողովրդի սրբութեանց վերջին ձեռնմխումը լցրել էր բաժակը: Այն տեղ Հայ ժողովրդի համար մի կառավարութիւն կար. դա Դաշնակցութիւնն էր: Պետական ֆունկցիաները, դատարաններն անգամ չէին գտնում Հայ ինդրաբրկուներ:

Մոռուական ընդհանուր յեղափոխութիւնը իւր նախօրեակին կամ սկզբնաւորութեան մէջն էր: Նրա հոգաց կողմը չէր: Նա իւր անձամբ սերած ու սերմանած վայրերի արդասաւորութեան մասին վատահ էր: Նոյնը պէտք է անէր և ապահովէր Երկրումն էլ:

Հակիրճ ու յատակ, սքանչելիորէն որակում է Ս. Զ. ու Նրա անդիմադրելի որոշումը, հոգեբանութիւնը. ««Մեծ իրաւունքն ք բանեցնելը պահանջում էր և մեծ պարտաճական աչուտիւնն էր և մեծ աստիճանի գոհաբերութիւն»»:

Զոհուեց Նա այդ մեծ աստիճանի Զոհաբերութեան մէջ:

1905-ի Մարտի ովմեգական թուականն է:

Մա՛ր, Նրա մա՛ն անգամ ստեղծագործում էր:

Մեր շատ մատիկ համակիրներից կար մէկը, արտաքուստ սառը, երկաթի, արդարատեայ լոգիկայի մի դէմք՝ որ կաղափարի մշտիկանց համակրելով, մանաւանդ Նրան՝ սիրելով ու յարգելով հանդերձ, չէր համակրում Կուսակցական տակարկացին:

Մի անգամ, վերջին անգամ, երբ Նա դեռ Կովկասումն էր, այդ անձնաւորութեան հետ մի սեղսնի վրաց, ուր Դումանն էլ կար, ուր եկել էր Նա սակելու իւր գօտեանդման խօսքերից, ճառերից մինը, սակելու Դումանին՝ թէ «Ժամանակ է որ քո առիւծի բաշերին թափ տառ»: Եւ Դումանը արդէն անձնասուր էր, բայց երկաթի լոգիկայի ընկերը յանառում էր դեռ ևս իւր առարկութիւններով՝ որոնք դարձեալ տակարկացին էին վերաբերում: Մի անախօրժութիւն անցաւ: Լուսացել էր, անքուն դուրս էինք եկել առուստեայ գերիւսավ թարմանալու: Այդ անձնաւորութեան դէմքի վրայ նկատում էր զրոյումի կնիքը, իսկ ոմանք կարծում էին թէ միջադէպը թողած լինի հետքը:

Քրիստոսիորը՝ ժամ չանցած, չէր էլ յիշում, չէր էլ մտածում դրա մասին:

Այդ նոյն անձնաւորութեան հետ, կողք կողքի կանգ-

նած ենք եկեղեցւում։ Տեղի էր ունենում Նրա եղերական մահուան սպահանդիսին, պատրաստուած դադաղի, սգսթաղի արարողութիւնը։

Արարութիւնը վերջացաւ. դուրս ենք գալիս միաւսն, Եկեղեցի բակում ինձ հարցրեց. «Այսօր ժողովունէք»։

— Այս', պատամիսնեցի։

— Ես էլ կը դամ, ասաց, ու երեկոյեան եկաւ որոշեալ ժամին ու անդը։

Խոր լուսութեան մէջ լսուեց հետեւեալ յայտարարութիւնը։

«Ես Նրա դադաղի առաջ մտածեցի՝ թէ ինչո՞վ արդեօք կարող եմ իմ յարգանքի ու պաշտամունքի պարտականութիւնը կասարել, և եկայ այն որոշման՝ որ այդ կարելի է միայն Նրա գծած ուղին նուիրուելով։ Ի՞նդունեցէք ինձ ձեր շարքերում, տուեցէք ինձ աշխատանք, դրէք իմ վերայ պարտականութիւն ինչ չափով որ կամենում էք»։

Ու այդ օրից դա էլ, երկաթի լոգիկան էլ օրինակելի դիսցիպլինայով²⁶⁾ մեր շարքերումն է։

—

Եւ շա՛տ շատերը, առաջ և յետոյ, այժմ և ապագայում, ամէն մի քայլափոխում իրանք իրանց հարցնում են և պարտասոր են հարցնել՝ ինչպէս պ. Քիյառը, թէ ի՞նչ կը մտածէր, ի՞նչպէս կը դատէր արդեօք Նա՛ այս խօսքի, այս նախադասութեան, այս հարցի, այս դործի մասին։

Դարձեալ յատակապէս վերջիշում ու ամիսովում է Ս. Զ. ը.

«Բաւակա՞ն է որ մարդս անկեղծօրէն նուիրուած է դադամիարի և համամիտ է քեզ հետ մօտակայ դործու-

նէութեան նկատմամբ, այդպիսի մարդու հետ միշտ օդակար է գործել ձեռքի ձեռքի տուած»։

Նրա համեստութիւնը չէ թոյլ տուել որ ասէր՝ թէ դրա վրայ հիմնեցին Դաշնակցութիւնը։ Մօտակայ գործունէութեան ծրագիրը դաշնակցել էր տուել ապագայ գործունէութեան, կամ աւելի ճիշտը ապագայի ծրագրային խոհերի տարբերութիւնը ունեցող գաղափարականներին։

Բայց և Նրա համեստութիւնը չէ թոյլ տուել յիշելու նաև, որ այդ մօտակայ գործունէութեան ծրագիր մէջ մտցրել էին մի այնպիսի գիծ, աշխարհացեացքի ամփոփում՝ որ ապագայի ծրագիրն իսկ ամփոփում էր։

Գաղափարակիցների Դաշնակցութիւնը եղաւ պատմափելիսովիայկան աշխարհացեացքի, Սօցիալական, Քաղաքական, Ծնուեական դաւանահների բալոր ճնշումների, բալոր շահագործումների դէմ ըմբռատացման, արդարութեան Դաշնակցութիւնը, թէվիզը եղաւ Սզգերի—Աշխատաւորների Դաշնակցութիւնը՝ որ պիտի լինի սպագայ Մարդկութիւնը։

Ահա՛ այդ է Հ. Յ. Պաշնակցութիւնը, Նրա Գաղափարական հիմնադիրների Ուստացչի մեծութիւնը։

Քրիստոնիորի Ուսուցչութիւնը, Դաշնակցական յօդաւորութիւնը չը սահմանափակուեց Հայկական շրջանով։ Եթէ Սարաֆով ողջ լինէր, անկասկած, պիտի պատմէր թէ ինք, իւր Մակենզուական Մարտական ընկերները ի՞նչքան են պարտական Նրան։ Մարտափովի այլ Մարտակիցները պարտական են յիշելու թէ ո՛րքան էին չնշուած Նրա չնչով։

Աւելի քան երբէք զգալի է Նրա բացակայութիւնը աղաստութեան, հայրենիքի, Օսմանեան Ընդհանուր Հայրենիքի վերաշնուրութեան այս օրերում երբ անհատական հասարակ ձգտումներից շատ բարձր կանգնած պէտք է

Ամսել, երբ վտանգ են սպառնում հասարակ, գծում կը ը-
քերը վերաշինութեան մեծ գործին :

Այժմ, և այս տե՛ղ է որ մի անգամ ևս երեւան պի-
տի գար Անհատի գերը Ազգերի, ժողովրդների ձականա-
գորի վրայ :

Նա կը լինէր, անպայման, միութեան, դաշնակից
գործունէութեան ղեկավար Յօդը և Թուրքին, և Արա-
բին, և Քուրդին, և Հային, և Մակեդոնացին, և Յոյնին :

Հայը շա՛տ բան է պարտական Նրան, պարտական է
նաև մի բան և Մակեդոնացին, պարտական են Նրա կո-
փած հմքերով Ազգերը :

Եթէ տիրող պայմանները մեզ դեռ ևս թոյլ չը տուե-
ցին Նրա ոսկերութեամբ քը փոխադրել հայրենիք, յամենայն
դէպս, Մենք և Մակեդոնացիք պարտական ենք Նրա եղե-
րական ընկած վայրի, հողակոյտի վրայ իր Յուշարձանը
կանգնեցնել :

Նա միայն մերը չէ : Ազգերինն է, Մարդկութեանն է :

ՆԻ

9/22 III 1909

• Փառ •

ՕՏԱՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻ ՏԱԿ

Եւ կարաւանը կանգ առաւ յոդնած . . .

Օտար ու հեռաւոր հորիզոնների տակ մի գերեզման
կայ, մի մուայլ ու անզարդ գերեզման, որ հայրական
ինամբով ու քնչութեամբ աղմում է իր կողքին մի ու-
րիշ՝ մի նոյնպէս անզարդ, նոյնպէս մոայլ գերեզման .
և նրանց վրայ ուշ գիշերներին պլազմն աստղերը սիրում
են երազել աշխարհի իրերը, մեղմ փափսուկով իրար են
յայնում մի խորին գաղտնիք, ապա թախծապատ ու
դալուկ դէմքով ահնում, անցնում են դէպի արեւմուտք :
Բունաւեր ու այրի թռչունը մողար, անիծելով իր թողած
վայրերը, հասնում է այնտեղ, պայտ է անում լոկի
դամբարանի վրայ, մի յետին ցաւոս երգ է հեծեծում և
անցնում է գնում՝ տանելով իր հետ էլի մի նոր վիշտ,
աւելի խորունկ, աւելի կիզիչ : Եւ մի դժբախտ երկրից
բոլոր լալկան հովերն այսաել են փչում միահամուռ սոյ-
լով, երբ բեռնաւորւած են ցաւ ու արցունքով, երբ
բօթեր ունին կամ խոր հասաչանք, երբ զայրոյթ ունին
կամ ծով հեծեծանք, երբ տրտունջ ունին կամ անզուսպ
բողոք :

Կարսուանը յոդնած՝ այնտեղ կանգ առաւ :

Նրանք եկել էին հովերի յետեւից քայլ առ քայլ,
դանդաղ ու յոդնած . եկել էին փոշոտ, անլերջ ու մոլոր
ձանսապարհներով, կռացած իրենց տառապանքի բեռի
տակ, առանց անքոցի, առանց արտունջի, առանց ափ-
սահանքի, որպէս ուխտածներ, որպէս փրկութեան նո-
խազներ : Եւ քայլել էին զիշեր ու ցերեկ, տրորւած
կրունկներով, աչքերը դէպի հեռուն, միշտ հեռուն, դէպի

այն օտար հորիզոնները, ուր նա մի օր իր կորիսնի հետ պառկեց հակացի քնով, այլ ևս երբէք չը վերկենալու համար, ուր հզօր գլուխը յոդնած ու առասպալից, մի օր, մի անէծքի օր, կախւեց լայն կրծքին, այլ ևս երբէք վեր չը բարձրանալու համար :

Հովերի պէս բեռնաւորւած, հովերի պէս անհանգիստ ու սպասոր, նրանք գալիս էին այն սեւաւոր երկրից, ուր ժպիտը յանցանք է, ու արցունքը՝ ծով, ուր կեանքը՝ անէծք է, և մահը փրկիչ, ուր հառաջանքից երկինքն է այրւած, և հողը անքում է ցաւերի բնոից : Եւ հովերի հետ անցել էին ծովեր ու գետեր, ոտի տակ տւել լեռներ ու ձորեր, բողոքը՝ շրթներին, կակիծը՝ սրաներին, անցել էին ու եկել գէսի մենաւոր գերեզմանը : Եկան, եկան ու շարան-շարան կանգ առան այստեղ, ուր հովերը մըրրիւում էին, գալարւում, ոռնուում :

Եւ կանգ առաւ ծերունին, ձերմակ միրուքն ու աւելքները հովերին գէմ տւած, և իր լայն կրծքից հառաջանք հանեց, գետին զարկեց մաշւած գաւաղանը, և հողը դրսդաց նրա հարւածից : Նրա հետ մէկտեղ կանգ առան բոլոր նրանք՝ որոնք եկել էին լեռներից ու ձորերից, այրերից ու մութ անտառներից, գաշտերեց ու աւերակներից, բոլոր նրանք՝ որոնք եկել էին իրենց կրծքի տակ կուտած ցաւը թափելու, իրենց հոգին աղմաղ մնձ բանն ասելու, սրաի ահազին բեռը վար դնելու . այրիների, ծերերի, առասպողների վշտոտ կարաւանը կանգ առաւ :

«Դու այստեղ ես քնած, քո կորիսնի հետ, ո՛վ մարդարէ, նահասակ, առաքեալ, ասաց ծերունին, այստեղ՝ օտար հորիզոնների, օտար երկնքի տակ : Մենք երկալի ուսնաման հաղած, երկաթ գաւաղան ձեռք առած, հովերի հետ մէկ տեղ քեզ վնասուել ենք երկրէ երկիր, սարից սար, ձորից ձոր : Մենք եկել ենք բոլոր նրանց կող-

մից, որոնք լալ են ուզում, բայց արցունք չ'ունին, հառաջանք ունին, բայց կրծքերն է փլած, և կակիծ ունին, առանց ափոփանքի, գանգատներ ունին, որոնց սիրտ չի դիմուաց, և աչքերին անթարթ նայում են հեռուն, հաստոցման, ու վրէժի սասանեցնող ու ահաւոր օրին են սպասում : Գալիս ենք բոլոր նրանց կողմից, որանց հոգին մետաղի պէս կարծրացել է արհաւերքի ու տանջնանքի մէջ, բայց էլ տոկալու, լուելու, համբերելու կարսղութիւն չ'ունի, և երազում են հաստոցման հրաշալի օրը : Եւ դու քնած ես, զարդուելի է ...

«Արդար վրէժի կարմիր ժամը դարբնող դու հակայ վարպետ, ի՞նչ եղաւ քեզ, երկիրն էր անողութ, որ չուտ գրկեց-քեզ, թէ երկինքը, որ փակից աչքերը, հազար ու հաղար մթագնած աչքեր օր ու գիշեր նայում էին հեռուն, դէպի մե հորիզոնը, ապասելով ասելութեամբ ու վրէժով զանգւած հակայական փոթորկին, որ քո ձեռքով շղթայաղերծ վերջապէս պիտի պոռթկար մեր սեւաւոր երկրի վրայ, սրբելու համար բոլոր արցունքները, բոլոր անդրաւութիւնները, բոլոր գարշանքը, տամոքելու բոլոր այրւած պատերը, փշերու բոլոր ժանդուա շղթաները : Եւ դու քնած ես... զարդուելի է ...

«Օ՛, այդ հաստոցման սքանչելի օրը... Ինչու ուշացաւ, նրա համար մեր մեռեները թանձր հողի տակ հեռում էին անհամերութիւնից, մեր լեռներն ու ձորերը մնինել էին ահաւոր գաղտնիքին իրավեկ՝ մահամերդ հիւանդները անզերջ հոգեվարքով, օրերով պայքարում էին մահամ դէմ, որ մեռենելոց առաջ այն գոռ փոթորկի կամծակի փայլը մի՛ յատին անգամ չողողայ նրանց աչքերում և մարդակեր ճիւազի վերջին զզւելի հառաջանքը նրանց ականջների մէջ մարի : Եւ մանուկներն օրօջանքը մէջ և ծերերը գերեզմանի հողաթմբի վրայ իրենց գաւաղանին յենած՝ նայում էին այն կողմը, որանդից պիտի ծագէր փոթորկածին արշալոյն ահազին : Եւ դու քնած ես... խորոնկ, անդորր քնով :

«Ի՞նչ եղաւ քեզ, ով դու սրտերի և կամքերի հը-
րաշալի հովիւ, արիւնոտ մրրիկների հզօր ու ըմբուռ վա-
րիչ, ով տւեց քեզ այդ ճակատաղբական քոնցը, այս-
քան խորը և այսպէս երկար։ Զը գիտե՞ս արդեօք, որ
հազար ու հազար հոգիների մէջ հաւատն է լալիս այրի
ու սգաւոր, հազար ու հազար սրտերի մէջ ծլած յոյսը
կենսատու շողերին կարօտ՝ մնալիս հեծեծում է սե խա-
ւարում։ փոթորիկն եկաւ՝ սե ամսիերը չը ցրեց, կայցակը
շանթեց՝ ու խոտոր անցաւ։ Եւ դու քնեցիր, երբ այս-
քան հոգիներ երազում էին քո մեծ և ահաւոր ու սքան-
չելի երազը։»

«Զէ՞ մեր լեռներում հրէշը մնաց կանունու ու բա-
պառնալի հազար գլխանի արիւնարրու հրէշը, որ մեր հո-
գիներին է քաղում, մեր արիւնը ծծում, մեր սիրու քա-
մում։ մննք եփուում, մրրկուում ենք նրա բոց չնչի ասկի։
Տե՛ս, քեզ բերել եմ նմուշները սարսափի, ցաւի, կավիճի,
լացի, սրանք ամենքը ասելիք ունին, սրանք ամենքը
գանգաստ են եկել. զարթի՛ր ու ասա՛, մեր ծոլ ցաւերի
վախճանն ուր է, ասա՛, ով է անիծել մնդ և ինչո՞ւ։
Եացի՛ր մեզ վրա գէթ մի անգամ, ով մեծ, ով ըմբոստ
հոգի, և երբ նայես, գիտեմ, քո հակայ սիրաը էլ առկալ
չի կարող, էլ քննել չի կարող և դու վեր կը ցցւես քո
բոլոր վեհութեամբ, այն բաց ու հպարտ ճակատով, որ
բոլոր գերադիներն ու պայքարողներն երազեցին, այն
հրաշապեղ աչքերովիլ, որոնց տակ նւիրական ու փրկա-
րար կայցակն էր մխում, այն սրանչելի նայւածքովի,
որից հաւատն էր կամքվուում բալզամի պէս՝ աւեր ու
վշտու հոգիներ վրայ, այն լայն կրծքովի, որ հզօր կաղ-
նու պէս փոթորիկների տակ երբէք չը անքաց և որի վրայ
բալզի բոլոր խորթ զաւակները գլուխ դնելու տեղ ունէին։»

«Զարթի՛ր ու վեր կաց, որ անսիրա հողը կարող է
կաշխանդել քեզ իր խոնսաւ ծոցում, երբ մննք տառա-
պում ենք անլուր ցաւերով, երբ մեր հեծեծանքն ու ա-
ղաղակն անսիրա երկնքի երեսն են մրկում։ չէ դու մեզ

համար, միայն մեզ համար ծնար, ապրեցիր, մեզ համար
տարոր պայքար, տանջանք և մեր փրկութեան օրը ե-
րագլցիր։ չէ քո պայծառ ճակատը մեզ համար կնձռւեց
և քո աչքերը մեզ համար լացին։ Ուր է այնքան լաց-
նարակ չլրիմ, որ քո զայրողին ու կակիծը պարտիկել կա-
րողանայ, երբ քո երազներից ամենից վսկմը, ամենից
ըմբոստ ու ահաւորը դեռ երազ մնաց. այն՝ որ կայծակ-
նելի մէջ էր փթթել փոթորկոտ գիտերներին և քո մեծ
հոգին յաղում էր, աղմկում միայնութեանդ թափծոտ
ժամերին, այն՝ որի համար մննք օր ու գիշեր ծնկաչոք
օրհում էինք քո ուղին, մեր շրթունքները կրծուում,
մեր միաը քրքրում ու արիւնոտում, որ համբ կարենք
ժամերի պէս, ձայն չը համենք, իրար չը
նաենք, հայեացքներս կամենք, լուենք, լուենք ու համ-
բերենք, մինչև պացթի քո հզօր ձայնը, մինչև կատարի
քո կարմիր ուխտը, մեր բոլորի ուխտը, մինչև փաղա-
տակի կարմիր արշալոյսը մեր յոդնած բիբերի վրայ։

Եւ այն երազը դեռ երազ մնաց, իսկ դու քնած
են. . . որ չար աստածը թափեց քեզ վրայ այս խորունկ
քանը։

«Դէ՞հ, շարժւիր ու վեր կաց, յնցիր ու թափ տուր
այդ հողակոյալ, կամդնիր մրրկոտ հովերի առաջ, որոնք
մոնչում են մեր աշխարհի գլխին։ Մի կոյր դիպւածն
ինչպէս կարող է այդքան հոյակապ կեանքը սպասել,
այդքան մեծ հոգու նւիրական հրգեհի բոցերը մարել,
այդ հզօր մաքիդի թուիչքը սանձել, այլ ևս երբէք չը
թողնելու համար։ Նարժւիր ու վեր կաց, այդ մննք ենք
ասում, մննք՝ որ գուրգուրեցինք քեզ մեր հոգիների
մէջ, մննք՝ որ հազար ու հազար մեռեներ ունինք վրէծի
ծարաւ, մննք՝ որ յոդնած ենք գերեզման փորելով, օ՛,
զարթի՛ր, զարթի՛ր ու վեր կաց. . .»

Գերեզմանն անշարժ է, հոգաթումքը համբ և նրա
վրա բուսած խոտերն օրօրում են իրենց զլուխները ան-
դրաց ցաւով, անկարելիի, անդառնալիի լուս շեշտով։ Եւ

արցունքի կաթիները ուռած ու խոչոր ցայտում են ծերունու աշքերից, ինձուս այտերի վրացից վար զլորւում, իջնում, իջնում, թրջում՝ աղեղարդ միրուքը և կաթիլ կաթիլ շաղւում գերեղմանի վրայ: Եւ նրա հետ մէկտեղ իր վշտու հօտը հեծեծում է ու լալիս և թափւած արցունքից հողախմումբը թրջուում է, քրքրուում, եռում:

Արցունքը թափւեց և հողը թրջւեց, արցունքի ցաւից՝ չիրիմը խօսեց.

«Դիտե՛մ, գիտե՛մ, բոլորը գիտեմ... փոթորիկը պայթեց, սև ամպը մնաց, կայծակը շամփեց ու խոտոր սնցաւ: Տւէք, աւէք ինձ ձեր բոլոր բեռը, բարդ բարդ արեցէք այս կրծքիս վրայ, և առանց արցունքի ու յուսահասութեան, վերսաբն յետ դարձէք. այնտեղ, լեռների վրայ թառած արծիներ կան, որ բոլոր շամփերի գաղանիքը գիտեն, դէպի լեռները, դէպի լեռները հայրենի... փոթորիկն այնտեղ է, և նա կը պայթի ահագին որսոով, երկնաքի վրայ սև ամպ չի մնաց, կայծակն այնտեղ է, նա կը շամփի ու էլ խոտոր չի անցնի:

Դէպի լեռները, դէպի արծիները, իսկ ևս... օ օֆ...»

Լուս գլշերներին ուշացած աստղերը դարձեալ գտվու են երազելու մենաւոր դամբարանի վրայ ու լալիս են անհունութեան մէջ. բունաւեր, այրի թռչունը մուլար այնտեղ է հեծեծում իր ցաւի երգը, և դժբաղդ երկրի հովերն անհանգիստ նրան են պատմում իրենց տեսածները:

Եւ գերեղմանը յուս երազում է աստղերի, ամպերի և հովերի հետ իր մեծ, իր սքանչելի երազը...

Եւ հեռու լեռներում թռւիս ամպերը բարդ բարդ դիզւում են, նա դիզւում. ճայթի՛ր, ճայթի՛ր փոթորիկ...

Հայաստանի Ազգային գրադարան



NL0420524

18004